

Էրտողան. «Մենք Պարտաւոր Չենք Ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը»

Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Թայիպ Էրտողան կրկին յայտարարած է, որ եթէ հայերը անկեղծ են 1915-ի հարցով, թող խնդիրը ձգեն պատմաբաններուն:

Թուրքիոյ նախագահը ելոյթ ունենալով TRT հեռատեսիլի եթերով, խօսած է նաեւ Հայկական հարցի մասին՝ պնդելով, թէ Հայկական սիրւութիւնը հանգիստ չի մնար: Ան մեղադրելով Սփիւռքին, յիշեցուցած է, թէ Թուրքիա միշտ ըսած է, թէ պատրաստ է քննարկել թէ՛ ման պատմաբաններու հետ: «Մենք կ'ըսենք, որ եթէ անկեղծ էք, բանանք մեր արխիւները, ձգենք թող պատմաբանները ուսումնասիրեն, գեկոյցները մեզ ներկայացնեն: Իսկ մենք, որպէս քաղաքագէտներ, նստինք խօսինք: Եթէ կայ ինչ-որ բանի համար վճարելու անհրաժեշտութիւն, մենք կը վճարենք այդ, սակայն ոչ մէկը չի գար:

«Խնդրի հետ կապ չունեցող երկիրներ, ըստ իրենց հայեցողութեան որոշումներ կը կայացնեն: Եթէ հարցնես, Հայաստանի տեղը քարտէզի վրայ ցոյց չեն կրնար տալ, բայց խորհրդարանի մէջ Հայաստանի հետ կապուած որոշումներ կ'ընդունին: Մենք պարտաւոր չենք ունենալ մէկու պատուէրով ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը», - ըսած է Էրտողան:

Ֆրանսայի Դեսպանը վերահաստատեց Ապրիլ 24-ի Նախագահ Օլանտի ժամանումը Հայաստան

Հայաստանի մօտ Ֆրանսայի արտակարգ եւ լիազօր դեսպան ժան-Ֆրանսուա Շարպանտիէ, Փետրուար 5-ին լրագրողներու հետ հանդիպման ընթացքին անգամ մը եւս վերահաստատեց Ֆրանսայի նախագահ Ֆրանսուա Օլանտի մասնակցութիւնը Ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առթիւ Երեւանի մէջ կայանալիք միջոցառումներուն:

Դեսպանը հրաժարեցաւ մեկնաբանել այդ նոյն օրերուն կալիփոլի ձակատամարտի միջոցառումներ կազմակերպելու թուրքիոյ որոշումը՝ ըսելով, թէ այդ պետութեան ներքին հարցն է՝ «Իւրաքանչիւր երկիր ինք կը որոշէ, թէ ինչ թուականին կը կազմակերպէ յիշատակման արարողութիւն: Ես չեմ ուզեր մեկնաբանել: Նոյնը կ'ըսեմ նաեւ հրաւիրուած անձերու ցանկին վերաբերեալ: Իւրաքանչիւր երկիր ինք կը որոշէ որուն հրաւիրել իր կազմակերպած միջոցառման: Միակ բանը, որ կրնան ձեզի ըսել եւ շատ պարզ է, այն է, որ նախագահ Ֆրանսուա Օլանտ պիտի գտնուի Հայաստան»:

Հրապարակուեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-Ամեակի Հռչակագիրը

Յունուար 29-ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան 100-եակի Պետական Յանձնաժողովի հերթական նիստը, որուն ընթացքին ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան իր ունեցած ելոյթին մէջ Թուրքիոյ նախագահ Ռէճեփ Թայիպ Էրտողանի վերջին հրաւերը որակեց սին եւ անհեռատես: Նախագահը նշեց, որ կալիփոլի արշաւի հարիւրամեակի հանդիսութիւններուն մասնակցելու գծով Երեւանին ուղղուած հրաւերին պատասխանած է հրապարակաւ, որպէսզի Էրտողանի նամակը չհասնէ գործուի լրատուամիջոցներուն մէջ: Նիստի աւարտին, մասնակիցները այցելեցին Միջեռնակաբերդի Յուշահամալիր, ուր տեղի ունեցաւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հուշակարգի հրապարակման արարողութիւնը:

Փաստաթուղթը ընթերցեց Սերժ Սարգսեան: Յայտարարութիւնը նախ նշում կը կատարէ Հայոց ցեղասպանութեան իրողութեան, կը ներկայացնէ նման ոճիրները դատապարտելու իրաւական հիմքերը, կը պահանջէ կանխարգիլել Ցեղասպանութիւններու կրկնութիւնը եւ կը վկայակոչէ միջազգային շարք մը կանոններ, ապա կը թուէ 12 կէտեր, որոնք նշում կը կատարեն գոհերու յիշատակի ոգեկոչումին, կը վերահաստատեն Հայաստանի եւ հայ ժողովուրդի յանձնառութիւնը՝ շարունակելու ճանաչումի ու կանխարգիլումի պայքարը, շնորհակալութիւն կը յայտնեն Ցեղասպանութիւնը ճանչցած պետութիւններուն, երախտագիտութիւն կը յայտ-



100-Ամեակի Պետական Յանձնաժողովի նիստը Երեւանի մէջ

նեն հայ ժողովուրդի վերապրած զաւակները ընդունող ժողովուրդներուն, կը շեշտեն հայ ժողովուրդի միասնական կամքը՝ իրաւական պահանջներուն կապակցութեամբ եւ կը դիմեն միջազգային ընտանիքին՝ պատմական արդարութիւնը վերահաստատելու կապակցութեամբ:

Փաստաթուղթը նաեւ կը դատապարտէ թրքական մերժողականութիւնը եւ Հայաստանի շրջափակումը, Անգարային կոչ կ'ուղղէ ճանչնալու Ցեղասպանութեան փաստը, կը գորակցի թրքական քաղաքացիական այն հասարակութեան, որ համարձակութիւն ունի ձայն բարձրացնելու այս հարցով, կը շեշտէ վերապրած հայ ժողովուրդի կատարած աշխատանքի կարեւորութիւնը, կը վերահաստատէ «Կը

Յիշեմ եւ Կը Պահանջեմ» կարգախօսը եւ հայորդիներու սերունդներուն կոչ կ'ուղղէ յանձնառու մնալու հայկական գոյգ հանրապետութիւններուն, ազգային նուիրական նպատակներու կատարումին:

Հռչակագիրը ամբողջութեամբ տեսնել մեր ներքին էջերուն վրայ: Յայտարարութեան բնօրինակը պիտի մնայ Ցեղասպանութեան թանգարանին մէջ, իսկ կրկնօրինակները պիտի ուղարկուին ՄԱԿ-ին եւ Հայաստանի ազգային արխիւին:

Նախապէս, Հայաստանի եւ Արցախի նախագահները, Ամենայն Հայոց ու Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներուն ընկերակցութեամբ ներկայ գտնուեցան Կոմիտասի անուան թանգարանի բացման հանդիսութեան:

Հայաստանի Ազգային Ժողովի Կողմէ Փաստահաւաք Խումբ Կը Մեկնի Ղարաբաղ

Անցեալ շաբաթ օր, Հայաստան-Ղարաբաղ սահմանին վրայ տեղի ունեցած միջադէպը ուսումնասիրելու համար, Հայաստանի Ազգային Ժողովը որոշած է փաստահաւաք խումբ ուղարկել Արցախ:

«Հիմնադիր Խորհրդարան» ընդդիմադիր կազմակերպութեան անդամները, որոնք ինքնաշարժներու շարասիւնով կը մեկնէին Արցախ, հոն ժողովուրդին տեղեկացնելու համար «100-ամեակը առանց ռեժիմի» կարգախօսին տակ իրենց կողմէ սկսած շարժումի մասին, Բերձորի մօտ յարձակումի ենթարկուած էին ԼՂՀ ոստիկաններուն կողմէ: Ժիրայր Սէֆիլեանի գլխաւորած «Հիմնադիր Խորհրդարան»-ի բազմաթիւ անդամներ վիրաւորուած էին, մինչ անոնց ինքնաշարժերը ջարդուփշուր եղած:

Լեռնային Ղարաբաղի ոստիկանութեան կողմէ հրապարակուած յայտարարութեան համա-

ձայն, հաւանական զանգուածային անկարգութիւնները կանխելու նպատակով, ԼՂՀ ոստիկանութիւնը ստեղծուած իրավիճակին առջեւ ստիպուած էր դիմել համապատասխան գործողութիւններու:

Միւս կողմէ, Լեռնային Ղարաբաղի նախագահ Բակո Սահակեան ցաւ յայտնեց պատահածի համար եւ հրահանգեց ծառայողական քննութիւն կատարել՝ միջադէպի մանրամասնութիւնները պարզելու համար:

Ստեփանակերտ մէջ տեղի ունեցած յատուկ ժողովի մը ընթացքին գեկոյցներով հանդէս եկան Արցախի Ազգային Անվտանգութեան ծառայութեան տնօրէնը եւ ոստիկանապետը: Նախագահ Սահակեան իր խօսքին մէջ յիշեցուց, որ «Հիմնադիր Խորհրդարան»-ի կազմակերպած ինքնաշարժներով երթը դժգոհութիւն յառաջացուցած էր հասարակութեան

«Մարդակային Իրաւանց Հսկիչը» Կը Քննադատէ Հայաստանի Իշխանութիւնները

«Մարդակային Իրաւանց Հսկիչ» (Human Rights Watch) միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակեց իր տարեկան գեկոյցը, հաստատելով, որ աշխարհի բազմաթիւ կառավարութիւններ, ապահովութեան նկատարումներու պատրուակին տակ, կ'անտեսեն մարդու իրաւունքները:

Իրաւապաշտպան կազմակերպութեան 2015-ի գեկոյցը նուիրուած է աւելի քան 90 երկրներու մէջ մարդու իրաւունքներու պաշտպանութեան հարցին: Հայաստան, ինչպէս նաեւ դրացի երկրները, դարձած են կազմակերպութեան քննադատութեան թիրախ:

2014-ին Հայաստանի իշխանութիւնները շարունակած են միջամտել խաղաղ ցոյցերուն: Ոստի-

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայաստանին այլ հռչակագիր է պետք

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Յուճուկարի 29-ի երեկոյան Միծեռնակաբերդի յուշահամալիրում Սերժ Սարգսեանը հանդիսաւորապէս ընթերցեց Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, ապա հայկական երկու պետութիւններէ ղեկավարները երկու կաթողիկոսներէ ուղղեցութեամբ ծաղկեպսակներ դրեցին անմեղ զոհերի յիշատակին:

Ամէն ինչ իսկապէս ազդեցիկ էր ու հանդիսաւոր՝ ե՛ւ գիշերային խորհրդաւոր լուսաւորումը, ե՛ւ այն, որ ներկայ էին Հայաստանի եւ աշխարհասփիւռ հայութեան բոլոր առանցքային դէմքերը, ե՛ւ հռչակագիրն ինքը, որի մայր օրինակը պահ է տրուելու թանգարանին, իսկ մի օրինակն ուղարկուելու է ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին:

Իսկ հիմա պատկերացրէ՛ք՝ հաւաքում են հայկական երկու պետութիւններէ ղեկավարները, երկու կաթողիկոսները, կառավարութեան անդամները, բարձրաստիճան հոգեւորականներն ու գինուորականները, դեսպանները, անուանի մտաւորականները, Սփիւռքի բոլոր «կառուցների» ու «յանձնախմբերի» ղեկավարները, եւ Սերժ Սարգսեանը նոյն հանդիսավոր պայմաններում նոյն խորհրդաւոր լուսաւորութեան ներքոյ ու պատուոյ պահակախմբի ֆոնին ընթերցում է Հայաստանի Հանրապետութիւնը կոռուպցիայից գերծժամանակակից պետութիւն դարձնելու վերաբերեալ համահայկական հռչակագիրը: Պատկերացրեցի՞ք: Վատահեցում ենք՝ նոյնքան ազդեցիկ կը լինէր, եթէ Սերժ Սարգսեանը «Ղեկավարուելով ՄԱԿ-ի կանտնադրութեամբ, առաջնորդուելով ՀՀ Սահմանադրութեամբ, կարեւորելով Հայաստանի առջեւ ծառայած մարտահրաշխանները, գիտակցելով ժամանակակից մրցուակ պետութիւն կառուցելու հրամայականը» եւ այլն՝ ուղերձ յղէր համայն հայութեանն ու ողջ աշխարհին, որ այսուհետ Հայաստանում արմատախիլ է արուելու կոռուպցիան, պաշտօնեաներն այլու կաշառք չեն վերցնելու, մենաշնորհներ չեն լինելու, դատարաններն անարդար որոշումներ չեն կայացնելու, ընտրութիւններ չեն կեղծուելու, որպէսզի երկիրը չդատարկուի, եւ ունենանք «առաւել հզօր Հայրենիք» ազատ եւ ժողովրդավար Հայաստանի Հանրապետութիւնը: Հռչակագրի մայր օրինակն էլ, ի դէպ, կարելի է յանձնել Հայաստանի պատմութեան թանգարանին, մէկական օրինակ էլ ուղարկել Արդարադատութեան նախարարութեանը, ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին, Համաշխարհային բանկին, Ինտերպոլին եւ այլն:

Բայց, չգիտես ինչու, Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութիւնը երբեք այսպիսի համահայկական հռչակագիր չի ընդունել: Մինչդեռ, եթէ անկեղծ լի-

նենք, Հայաստանի համար այս խնդիրները շատ աւելի կարեւոր են: Բոլորիս աչքի առաջ երկիրը դատարկում է, եւ առաջին հերթին հենց այս խնդրի վրայ պիտի կեդրոնանայ ողջ հայութիւնը: Փողոցում մօտեցէ՛ք ցանկացած մարդու եւ հարցրէ՛ք՝ Հայաստանը դատարկում է սոցիալական աղէտալի վիճակի եւ համատարած կոռուպցիայի՞ պատճառով, թէ՞ որովհետեւ Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը դեռ չի հասել իր տրամաբանական աւարտին: Կամ մօտեցէ՛ք ցանկացած մէկին ու երկու տարբերակ առաջարկէ՛ք՝ կամ աշխարհը ճանաչում է Հայոց ցեղասպանութիւնը, ու թուրքիան էլ ներողութիւն է խնդրում, կամ այսօրուայ Հայաստանը դառնում է նորմալ, կոռուպցիայից գերծ երկիր, որտեղ օրէնքները բոլորի համար են: Տեսէ՛ք ո՞ր տարբերակը կ'ընտրի: Միայն թէ չասէ՛ք՝ «բայց մէկը միւսին չի հակասում, կարելի է միաժամանակ աշխատել երկու ուղղութիւններով»: Բայց փորձը ցոյց է տալիս, որ հնարաւոր չէ: Բացի այդ էլ՝ առաջնահերթութեան խնդիր կայ:

Լաւ, հարցին նայենք այլ տեսանկիւնից: Ի՞նչ էք կարծում, ո՞րն է աւելի հեշտ, հասնել նրան, որ աշխարհը ճանաչի Հայոց ցեղասպանութիւնը եւ թուրքիային ստիպի զղջալ ու վերադարձնե՞լ մեր պատմական հայրենիքը, թէ՞ Հայաստանում արմատախիլ անել կոռուպցիան ու հասնել նրան, որ օրէնքի առջեւ բոլորը հաւասար լինեն: Համաձայնուէ՛ք՝ երկրորդն աւելի հեշտ է: Պարզ ասած՝ գոյութիւն ունեն երկու կարեւորագոյն խնդիրներ, որոնցից մէկը լուծումը բացառապէս մեզանից է կախուած, իսկ միւսի լուծումը կախուած է արտաքին աշխարհից, աշխարհաքաղաքական իրավիճակից, գերտէրութիւնների շահերից եւ այլն: Իսկ մենք, փոխանակ լուծենք այն խնդիրը, որն ի վիճակի ենք անել սեփական ուժերով, աշխարհասփիւռ հայութեան ջանքերը կենտրոնացնում ենք այն խնդրի վրայ, որի լուծումն առանձնապէս կախուած չէ մեզանից: Ու յետոյ հիասթափուում ենք, որ ոչինչ չի ստացւում, եւ աշխարհի հզօրներն իրենց հերթապահ ուղերձներում չեն օգտագործում «հարկաւոր» բառը:

Յ. Գ. Իսրայէլն «Այլեւս երբեք» կարգախօսով պետութիւն ստեղծեց, ընդ որում՝ հզօր ու ժողովրդավարական պետութիւն, որն արդէն 67 տարի պատերազմի մէջ է, բայց որտեղ արտագաղթի փոխարէն միայն ներգաղթ կայ: Մենք նոյն կարգախօսն ենք ընտրել, բայց հզօր ու ժողովրդավարական պետութիւն կառուցելու հարցը, չգիտես ինչու, երկրորդ պլան ենք մղել: Երեւի տնտեսապէս ձեռնտու չէ:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Անսպասելի տարր Ղարաբաղի խնդրում

ՆԱՅԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

ՌԻԱ Նովոստին տեղեկացնում է, որ ԵՍԽՎ-ում ձայնը վերագործնելու դիմաց Ռուսաստանին առաջարկուած պահանջների թոււմ է դարաբաղեան խնդիրը:

«Վեհաժողովի ղեկավար Անն Բրասերը նշել է, որ պատուիրակութեանը լիազօրութիւնները վերադարձնելու համար պէտք է իրականացուեն բանաձեւի կէտերը (զօրքերի դուրսբերում Մերձդնեստրից, Ղրիմի վերադարձ, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործում առաջընթաց եւ այլն): Ապրիլին ԵՍԽՎ-ը կը ստուգի պահանջների «կատարումը» եւ կ'որոշի ինչ անել:

Ստացւում է, որ դարաբաղեան հակամարտութիւնը, չնայած Միւնսխի իւմբի համանախագահութեան ձեւաչափի առկայութեանը, դարձել է Արեւմուտքի ու Ռուսաստանի յարաբերութիւնների կարեւոր անկիւնաքարերից մէկը: Յիշեցնենք, որ օրերս երեք համանախագահներն Ատրպէյճանին մեղադրել են իրավիճակի լարման մէջ ու կողմերին կոչ արել վերադառնալ բանակցութիւններին: Յայտարարութիւնն աննախադէպ էր եւ մեծ հաշուով նպաստել է լարուածութեան թուլացմանը:

Ռուսաստանն ի՞նչ քայլեր պէտք է անի «դարաբաղեան կարգաւորման գործում առաջընթացի» համար, որպէսզի գոհացնի Եւրոպային: Մեծ հաշուով, Եւրոպան Ռուսաստանին այդ հաշուով երբեք պահանջներ չի ներկայացրել: Արդեօք Ռուսաստանից ակնկալուող քայլերի թոււմ է Հայաստանից ռազմաբազայի դուրսբերումը: Թէ՞ Եւրոպան սպասում է, որ Ռուսաստանը կը դադարի սպառազինել Ատրպէյճանին: Միզուցէ Եւրոպան ցանկանում է, որ Ռուսաստանը ճնշի Հայաստանին եւ ստիպի համաձայնուել առաջար-

ընդամէնը պայքարում էին իրենց ընտրական իրաւունքի համար: Արդեօք դա տեղի ունեցաւ ա՞յն ժամանակ, երբ իրազեկման ակցիաներ անող ՀԱԿ երիտասարդներին, քաղաքապետարանի մօտ, Կոմիտաս 5-ի համար պայքարող ակտիւիստներին սկսեցին ծեծել ու բերման ենթարկել ոստիկանութեան բաժիններ: Իսկ գուցէ վճռորոշ փուլն ատոմէքենաների այրման, կամ ազատամարտիկների, Վիլլեն Գաբրիէլեալի, Արամ Մանուկեանի, միւսների նկատմամբ կիրառուած բռնութիւնն էր: Կամ գուցէ բռնութիւններն ամբաստանողներն անուշադրութեամբ այն պատճառով, որ դրանց արդիւնքում ոչ ոք չպատժուեց, իսկ դրանց անմիջականօրէն առնչուող մարդիկ շարունակեցին պաշտօնավարե՞լ, ինչպէս Լիովա Երանոսեանը: Հնարաւոր է, որ իր դերակատարումն ունեցաւ նաեւ իշխանութեան հաւաքական վերաբերմունքը կատարուածին, կէսբերան դատաւարտումներ, կիսատ-պուտ մեղադրանքներ, հակառակը՝ թաքնուած գոհունակութիւն եւ խրախուսում: Թէ՛եւ, անշուշտ, եղան նաեւ դատաւարտման իօսքեր, ինչպէս, օրինակ, գեներալ Մանուէլի թեւաւոր դարձած արտալայտութիւնը. «Բռնութիւններին վատ եմ

կուող կարգաւորմանը, որը տարածքների յանձնում է նախատեսում»:

Ղարաբաղը վաղուց քաղաքակրթական դիմակայութեան առաջին գծում է: Դիմակայութեան գիծը հիմա աստիճանաբար վեր է ածուում ռազմաճակատի: ՆԱՏՕ-ն յայտարարել է Ռուսաստանի հարեւան երկրներում իր ուժերի ամրապնդման մասին՝ փաստացի հաստատելով, որ ՆԱՏՕ-ի գլխաւոր հակառակորդն է դառնում հենց Ռուսաստանը:

Իր հերթին, Մոսկուան յայտարարել է, որ մեծացնելու է ռազմավարական ուղղութիւններով սպառազինութիւնը, այդ թւում՝ միջուկային զէնքը, չչստակեցնելով, թէ որտեղ է դա տեղի ունենալու: Հաւանաբար այնտեղ, որտեղ ՆԱՏՕ-ն կը ստեղծի իր կեդրոնները:

Արդեօք Հայաստանը, աւելի ճիշտ նրա տարածքում գտնուող ռուսական բազան ռազմավարական ուղղութիւնների թոււմ է: Չի բացառուում, հաշուի առնելով, որ երէկ Վրաստանում էր ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարի տեղակալ Ալեքսանդր Վերշտոն, ով յայտարարել է, որ մինչեւ տարեկան Վրաստանում ՆԱՏՕ-ի ուսումնական կեդրոն է ստեղծուելու: Նա յայտարարել է նաեւ, որ այդ կեդրոնից կարող են օգտուել նաեւ այլ երկրներ:

Իսկ ՀԱՊԿ գլխաւոր քարտուղար Նիկոլայ Բորդիուստան էլ յայտարարել է, որ աշնանը Հայաստանում ՀԱՊԿ զօրավարժութիւններ են տեղի ունենալու:

«ԼՐԱԳԻՐ»

Մամիա
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՏԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արևմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

Շաբ.ը էջ 5

Ո՛չ Բռնութեանը

ԱՐՄԻՆԷ ՕՀԱՆԵԱՆ

Ինչպէ՞ս եւ ե՞րբ պատահեց, որ բռնութիւնը զանդաղ ու հաստատուն քայլերով մտաւ մեր կեանք, դարձաւ մեր կեանքի անբաժանելի մասը: Արդեօք դրա

հիմքերը դրուեցին 1999-ի Հոկտեմբերի 27-ի՞ն, երբ գէնքով մարդիկ մտան խորհրդարան եւ զլիսատեցին երկրի իշխանութիւնը: Թէ՞ 2008-ի Մարտի 1-ին, երբ գէնք կիրառուեց խաղաղ բնակչութեան նկատմամբ, որոնք

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ծեծի ենթարկուած «Հիմնադիր խորհրդարանի» Անդամները Ապաքինուում են

Բերձորում Յունուարի 31-ի ծեծի ենթարկուած «Հիմնադիր խորհրդարանի» անդամները արդէն ապաքինուում են:

NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Վարուժան Աւետիսեանն ասաց, որ ծեծի ենթարկուած «Նոյեան Տապան»-ի լրագրողը գտնուում է «էրեբունի» բժշկական կենտրոնում», վիճակը նորմալ է: Կարգաւորում է նաեւ Ստեփանակերտի հիւանդանոցում գտնուող Մխիթար Աւետիսեանի վիճակը, նրա մօտ կապուած էին փայծաղի վնասուածք, ներքին արիւնահոսութիւն, բայց, բարեբախտաբար, դա հերքուել է: Լաւ է նաեւ Քերոբ Ղազարեանի առողջական վիճակը, որն արդէն դուրս է գրուել:



«Հիմնադիր խորհրդարանի» ծեծի ենթարկուած անդամներէն մին

Անդրադառնալով ԼՂՀ ոստիկանութեան տարածած յայտարարութեանը՝ վարուժան Աւետիսեանը դա բնութագրեց «կեղտոտ կոլեան մեթոդաբանութեամբ, սովետական ԿԳԲ-ի ոճով գրուած անհեթեթ յայտարարութիւն, կեղծիք, սուտ, հայհոյանք»: Նա նշեց, որ դա միասնաբար ծրագրուած եւ իրականացուած օպերացիա է, որոշումը կայացուել է ռեժիմի երեւանեան եւ ստեփանակերտեան գլխաւոր ուժերի ներկայացուցիչների մակարդակով: «Իրենք շատ աւելի նախաձեռնողի կերպով պահպանում են տարածքը, որը են ձեւաւորել, ճամբարային վիճակ են ստեղծել, ելման կէտը դա է», - ասաց «Հիմնադիր խորհրդարանի» անդամը: Տեղի ունեցած միջադէպի մասով նրանք որեւէ մեկին չեն դիմել: «Ո՞ւմ դիմենք, ի՞նչ իմաստ կայ»:

Կը գնան նորից «Հիմնադիր խորհրդարանի» անդամները Արցախ, թէ ոչ, վարուժան Աւետիսեանն ասաց, որ նպատակը, որ հետապնդում էին՝ իրազեկումը, տասնապատիկ անգամ տեղի է ունեցել, հնարաւոր է որոշ ժամանակ յետոյ նորից կազմակերպեն:

Վերաքննիչն Անփոփոխ Թողեց

Շանթի եւ Ընկերների Գործով Դատավճիռը

Վերաքննիչ դատարանը Յունուար 2-ին որոշեց անփոփոխ թողնել Շանթ Յարութիւնեանի եւ ընկերների գործով առաջին ատեանի դատարանի 2014-ի Հոկտեմբերի 17-ի որոշումը:

Անփոփոխ մնաց նաեւ անչափահաս Շահէն Յարութիւնեանի դատավճիռը, ով դատապարտուել էր 4 տարուայ պայմանական ազատագրկման:

«Յանուն Հայաստանի Հանրապետութեան չէ» - յայտարարեց դատավարութեանը ներկայ Բաֆֆի Յովհաննիսեանը, ով դատավճռի հրապարակման ողջ ընթացքում դատարանին հակառակ էր կանգնել, եւ դուրս եկաւ դատարանի դահլիճից:

Պաշտպանական կողմի փաստաբանները՝ Արա Զաքարեանը եւ Ինեսա Պետրոսեանը յայտարարե-

նրթը: Նշենք, որ «Հիմնադիր խորհրդարանի» փոխանցմամբ՝ Բերձոր չհասած ոստիկանական մեքենաներով անյայտ անձինք յարձակուել են իրենց ավտոբիւսի մասնակիցներին վրայ, ծեծի են ենթարկել նրանց, կոտրել բոլոր մեքենաները եւ դրօշները: Ըստ այդմ, վիրաւորուել է «Նոյեան Տապան»-ի լրագրողը, նրան տեղափոխել են հիւանդանոց: «Հիմնադիր խորհրդարանի» ներկայացուցիչ ժիրայր Սեէֆիլեանը եւ երթի բազմաթիւ մասնակիցներ ստացել են մարմնական վնասուածքներ:

«Հիմնադիր խորհրդարանի» անդամ վարուժան Աւետիսեանը NEWS.am-ի հետ զրոյցում յայտնել էր, որ յարձակումից յետոյ հիւանդանոց են տեղափոխուել մի քանի անձ: Ծեծի ենթարկուածներին 2-ի՝ ազատամարտիկներ Քերոբ Ղազարեանի եւ Մխիթար Աւետիսեանի առողջական վիճակը ծանր է: ԼՂՀ ոստիկանութիւնը յայտարարութիւն էր տարածել՝ նշելով, թէ «ոստիկանութեան ներկայացուցիչները բացատրական աշխատանքներ են իրականացրել նրանց հետ՝ յորդորելով հետ կանգնել այդ նախաձեռնութիւնից, քանի որ այն հասարակական լարուածութիւն է առաջացրել Արցախում»:

«Հիմնադիր խորհրդարանը» Արցախ էր մեկնել՝ ավտոբիւս իրականացնելու եւ «100-ամեակն առանց ռեժիմի» նախաձեռնութեան մասին իրազեկելու:

Դատավճռի հրապարակումից յետոյ ամբաստանեալների բարեկամները բողոքում էին դրա դէմ՝ յայտարարելով, որ դատարանը պարզապէս իշխանութեան պատուէրը կատարեց:

Յիշեցնենք, առաջին ատեանի դատարանը տարբեր տարիների ազատագրկման էր դատապարտել «Ես սկսում եմ յեղափոխութիւն» կարգախօսով անցեալ տարուայ նոյեմբերի 5-ին բողոքի ակցիա անցկացնելուց յետոյ կալանաւորուած Շանթ Յարութիւնեանին եւ նրա ընկերներին:

Գեւորգ Կոստանեանը Դիմել է ՌԴ Գլխաւոր Դատախազին

Հայաստանի Գլխաւոր դատախազ Գեւորգ Կոստանեանն փետրուարի 3-ին, նամակով դիմել է ՌԴ Գլխաւոր դատախազին:

Գեւորգ Կոստանեանը ՌԴ իր գործընկերոջը դիմել է Վալերի Պերմյակովի դէմ՝ քրէական գործի վարույթը հայկական կողմին յանձնելու հարցով: Եթէ դասալքութեան յատկանիշներով յարուցուած գործը յանձնուի հայկական կողմին, դա նշանակում է, որ քննութիւնը ամբողջովին կ'իրականացնի հայկական կողմը: Ենթադրուում է, որ Վալերի Պերմյակովին էլ կը փոխանցուի հայկական կողմին:

Յունուարի 12-ին Գիւմրիի Միասնիկեան փողոցի տներին մէկուսի հրագէնային վնասուածքներից սպանուած են գտել Աւետիսեանների ընտանիքի 6 անդամներին, այդ թւում՝ մէկուկէս տարեկան դստերը: Վեց ամսական Սերյոժա Աւետիսեանը վնասուածքներ էր ստացել եւ տեղափոխուել է հիւանդանոց, սակայն դէպքից 7 օր



Հայաստանի Գլխաւոր դատախազ Գեւորգ Կոստանեան

անց հիւանդանոցում մահացել էր նաեւ նա:

Այս գործով նոյն օրը, կէսգիշերին մօտ ձերբակալուել է ռուս զինուորական Վալերի Պաւելի Պերմյակովը, ըստ պաշտօնական տուեալների՝ հայ-թուրքական սահմանի մօտ: Ներկայումս նա գտնուում է ռուսական ռազմականում:

«Բարգաւաճ Հայաստանը» Ակնարկեց Իշխանութեանը, Իշխանութիւնը Էլ Գագիկ Ծառուկեանին

Իշխող ռեժիմը սպասարկող խոշոր բիզնեսմեններին կարելի է հատ-հատ թուարկել: Այս մասին Փետրուարի 3-ին խորհրդարանում յայտարարել է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը:

«Ես անուն առ անուն ճանաչում եմ նրանց բոլորին, որոնք իշխանութեան թեթեւ ձեռքով ընտրութիւնների ժամանակ մեքենայութիւններ են անում: Ընտրութիւնները կրկնուելու սովորութիւն ունեն: Այդ պատճառով էլ իշխանութիւնը մտածում է՝ նրանք մեզ դեռ պէտք էր գան: Դրա

համար էլ նրանց ձեռք չեն տալիս, այլ փոխարէնը պահանջում են, որ փոքր բիզնեսը մատնի խոշորին: Իսկ խոշոր բիզնեսը աճում եւ բարգաւաճ է, սպասարկում է ձեզ ընտրակեղծիքների ժամանակ, իսկ դուք էլ օգնում էք նրանց մաքսատանը», - յայտարարեց Զոհրաբեանը:

Դրա ի պատասխան՝ խորհրդարանի խօսնակ Գալուստ Սահակեանը նշեց. «Այո, կան, օրինակ, շատ խոշոր գործարարներ, որոնք շատ ազնիւ են աշխատում: Եւ մենք այդ մասին զիտենք»:

Ակնյայտ է, որ Սահակեանն ակնարկել է Գագիկ Ծառուկեանին:

Հայոց Ձեղասպանութեան Չոհերը Կը Սրբադասուեն Ապրիլի 23-ին

Սրբադասման հուշակումը տեղի կունենայ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նախօրէին՝ ապրիլի 23-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Բաց խորանի ներքոյ Վեհափառ հայրապետ Գարեգին Երկրորդը կաթողիկոսական կոնդակով կը հռչակի Հայոց ցեղասպանութեան նահատակների սրբադասումը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հայցեակարգային գրասենեակի տնօրէն Բագրատ Եպիսկոպոս Գալուստեանը համոզուած է, որ այդ օրը արարողակարգին ժողովուրդը ներկայ կը գտնուի՝ «խողովով, աղօթքով, վէհութեամբ եւ հպարտութեամբ»:

«Նախ, որ պատմական իրադարձութիւն է տեղի ունենում չորս հարիւր տարուայ ընդմիջումից յետոյ: Եւ երկրորդ՝ իրենց կեանքը խառնելու, մասնակցութիւն ունենալու այս սրբադասման հռչակմանը մեր սուրբերի հետ, մեր Յեղասպանութեան մեծ նահատակների այդ սիրանքին եւ հերոսութեանը, գիտակցուած նահատակութեանը»:

Եպիսկոպոսը դժուարացաւ պատասխանել՝ նշելով, որ հաւանաբար դրա համար տարբեր պատճառներ են եղել՝ պատմական, քաղաքական եւ այլն, եւ եկեղեցու հայրերը հնարաւորութիւն չեն ունեցել բազմակողմանի քննութիւն կատարելու ու այս կամ այն անձը կամ անհատների խումբը սրբադասելու, սուրբ հռչակելու:

Սրբադասման յատուկ կարգ, ինչպիսին, օրինակ, Կաթողիկ եկեղեցուն է, Հայ Առաքելական Եկեղեցին չունի: Հաւանաբար, ըստ Բագրատ Եպիսկոպոսի, Հայ Առաքելական սուրբ եկեղեցին սրբադասման համար առաջնորդուել է ժողովրդի ներսում տասնամեակների ընթացքում ձեւաւորուած, ժողովրդի մէջ տարածուած գտած պատկերացումներով այս կամ այն անհատի կամ անհատների խմբի մասին: Եւ եկեղեցին, այդ ամէնը քննութեան առնելով, ի վերջոյ կաթողիկոսական կոնդակով հաւատաւորել է՝ սուրբ կամ սրբեր է հռչակել:

Հայոց ցեղասպանութեան գոհերի սրբադասման գործընթացը սկսուել է դեռ 2005 թուականին. հրախրուել են մի քանի եկեղեցական բարձրագոյն ժողովներ՝ քննութեան առնելով սրբադասման կարգը, ձեւը եւ հռչակման օրը:

ԼՈՒՐԵՐ

Նիկոլայ Բորդյուժան Բացառել է ՀԱՊԿ-ի Միջամտութիւնը Ղարաբաղի Հակամարտութեանը

Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան, ասուլիսի մը ընթացքին անդրադառնալով հայ-ադրբեջանական հակամարտութեան վերջին շրջանի լարուածութեանը, բացառել է ՀԱՊԿ-ի կողմից որեւէ ռազմական միջամտութիւնը:

Նա շեշտել է, որ դա կը հակասի ՀԱՊԿ-ի հիմնական դիրքորոշմանը, այն է՝ Ղարաբաղի հակամարտութիւնը պէտք է լուծուի բացառապէս խաղաղ ճանապարհով:

Յիշեցնենք՝ Հայաստանը ՀԱՊԿ-ի անդամ է, իսկ Ադրբեջանը՝ ոչ: 1992 թուականին ստեղծուած ռազմական փոխգործակցութեան այս կազմակերպութիւնում ընդգրկուած է ԱՊՀ-ի անդամ վեց երկիր: Հայաստանը հենց սկզբից անդամակցել է այս կառույցին:

ՀԱՊԿ-ի գլխավոր քարտուղարը մամուլի ասուլիս է տուել «Ռոսիյա Սեգոդնյա» գործակալութեան սրահում, որտեղից ուղիղ կապ էր հաստատուել նաեւ Աստանայի հետ:

Պատասխանելով հայ-ադրբեջանական հակամարտ գծում Յունուար ամսին արձանագրուած լարուածութեան եւ ՀԱՊԿ-ի կողմից յստակ դիրքորոշում չցուցաբերելու հարցին՝ Նիկոլայ Բորդյուժան նախ նշել է, որ ՀԱՊԿ-ը եւ՝ 2014-ին, եւ՝ նախկինում բազմիցս հանդէս է եկել յայտարարութիւններով՝ յստակ ներկայացնելով հակամարտութիւնը խաղաղ ճանապարհով լուծելու իր դիրքորոշումը:

«Եթէ դուք կարծում էք, որ մենք այնտեղ պէտք է ինչ-որ ձեռով ռազմական միջոցներով պատասխանենք, ապա դա հակասում է ՀԱՊԿ-ի հիմնական դիրքորոշմանը, այն է՝ Լեռնային Ղարաբաղի ինդիքը լուծել բացառապէս խաղաղ միջոցներով՝ հիմնուելով առաջին հերթին Մինսկի խմբի վրայ», - ասել է Բորդյուժան:

«Պալա»-ի թղթակիցը հարցրել է Գիւմրիի միջադէպից, մասնաւորապէս, հետաքրքրուելով, թէ ի՞նչ պատասխանատուութեան կենթարկուէ Գիւմրիի ռուսական ռազմակայանի ղեկավարները, քանի որ Աւետիսեանները ընտանիքի 7 անդամներին սպաննած զինուորը ռազմակայանը լքել է գէնքը ձեռքին:



ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան

Բորդյուժան ասել է՝ Ռուսաստանի պաշտպանութեան նախարարը հաւաստիացրել է, որ այսպիսի յանցագործութիւնը թոյլ տուած բոլոր անձինք, այդ թւում նաեւ՝ զինծառայողների նկատմամբ անհրաժեշտ վերահսկողութիւն չիրականացնողները, համապատասխան պատիժ կը ստանան, բայց դրա համար նախ պէտք է սպասել քրէական գործի նախաքննութեան աւարտին:

«Ես հասկանում եմ, որ դա սարսափելի ողբերգութիւն է: Շատ սարսափելի ողբերգութիւն է», - ասել է նա, - «Ցաւոք, շատ այդպիսի դէպքեր եմ չիշում: 90-ական թուականներին նման դէպքերը զգալիօրէն շատ էին ոչ միայն Ռուսաստանի բանակում, այլեւ միւս երկրների զինուած ուժերում: Դա է կեանքը, ես կարող եմ եւս մէկ անգամ ցաւակցութիւն յայտնել հայկական կողմին»:

Նա յայտնել է, որ 2015 թուականին Հայաստանում մեծ գոհաւարութիւններ են անցկացնելու ՀԱՊԿ-ի անդամ երկրների խաղաղապահ ուժերը: Նաեւ ասել է, որ Ռուսաստանի փոխվարչապետի գլխավորութեամբ յանձնաժողով է կազմուել՝ ուսումնասիրելու համար, թէ Ուկրաինայում նախկինում արտադրուող ռազմաարդիւնաբերական ապրանքները որ երկրներում կարող են արտադրուել, ու տուել է նաեւ Հայաստանի անունը:

Ուկրաինայի դէպքերի ու գոհնաւոր յեղափոխութիւնների մասին նա յայտարարել է, որ ՀԱՊԿ-ը ներուժ ունի կանխելու գոնաւոր յեղափոխութիւններն ու ոչ սահմանադրական յեղաշրջումները:

Մարդակային Իրաւանց Հսկիչ

Շարունակուած էջ 1-էն

կանութիւնը, խաղաղ ցուցերու ընթացքն առնուազն 70 ակտիւիստ ձերբակալած է, որոնց շարքին՝ Աֆրիկեաններու շէնքի քանդման դէմ բողոքողներ եւ ելեքտրականութեան սակագիններու բարձրացման դէմ հանդէս եկող ցուցարարներ:

Կազմակերպութիւնը չիշած է նաեւ Շանթ Յարութիւնեանի եւ անոր 13 կողմնակիցներու ձերբա-

կալութիւնը եւ Շանթի 15-ամեայ որդին ձերբակալելու փորձերը:

Չեկոցը կը յայտնէ որ, տեղացի իրաւապաշտպաններու կարծիքով՝ այս բոլորի դրդապատճառները քաղաքական են:

Իրաւապաշտպան կազմակերպութիւնը առանձնացուցած է նաեւ կալանաւորուած անձերու նկատմամբ խոշտանգումներու հարցերը եւ լրագրողներու նկատմամբ ճնշումներն ու բռնութիւնները:

Փաստահաւաք Խումբ

Շարունակուած էջ 1-էն

տարբեր հատուածներուն մէջ: «Ունենալով հաւաստի տուեալներ, երթը կասեցնելու համար Քաշաթաղի շրջան հարիւրաւոր

մարդկանց մեկնելու մասին՝ ոստիկանութիւնը հասարակական կարգը պահպանելու նպատակով ստիպուեցաւ իրականացնել համապատասխան գործողութիւններ», ըսաւ Սահակեան:

Վիզէն Սարգսեան. «Յեղասպանութեան Իրաւական Պահանջների Փաթեթը Դեռ Պատրաստ Չէ

Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը առաջին փաստաթուղթն է, որը ընդունուել է ոչ թէ Հայաստանի պետական մարմինների կամ սփիւռքի ինչ-որ կառույցի, այլ պետական յանձնաժողովի կողմից, որը ներառում է սփիւռքի բոլոր տարածքային կառույցները: Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտում Յունուարի 30-ին Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին նուիրուած մամուլի ասուլիսում յայտարարել է ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիզէն Սարգսեանը:

Ըստ նրա՝ սա հանգամանալից պատասխան է յատկապէս նրանց համար, ովքեր պատմութիւններ են յորինում, թէ Հայաստանի հայերն ու սփիւռքահայերը տարբեր ձգտումներ եւ ինդիքներ ունեն:

«Սա այն միասնականութեան ցուցիչն է, որը մեր ժողովուրդը դրսեւորում է Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ», - ասել է Սարգսեանը:

Անդրադառնալով հռչակագրի՝ հայ ժողովրդի իրաւական պահանջների մասին 6-րդ կէտին՝ նա ընդգծել է. «Մենք յստակ ժամկէտներ թէքը դրել, թէ երբ է պատրաստ լինելու վերջնական փաթէթը, քանի որ իրականում այդ փաթէթի մշակումը շատ լուրջ ներքին աշխատանքներ է ենթադրում եւ համաձայնութիւն: Երբ մենք խօսում ենք համալիր փաթէթի մասին, դա ենթադրում է հիմնական մտտեցումներ իրաւական պահանջների հանդէպ՝ Հայոց ցեղասպանութեան հե-



ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիզէն Սարգսեան

տեւանքները վերացնելու ուղղութեամբ: Մենք կարծում ենք, որ տուեալ փուլում դա բաւական է պատկերացնելու համար, թէ որ ուղղութեամբ է շարժուում պետական յանձնաժողովը՝ իրաւական պահանջների տեսանկիւնից»:

Ինչ վերաբերում է իրաւական պահանջները միջազգային դատական ատենաներում ներկայացնելու հնարաւոր սցենարին, Վիզէն Սարգսեանը նշել է. «Լինելով միջազգային իրաւունքի մասնագէտ՝ ես պետական յանձնաժողովի անունից խօսելու պատասխանատուութիւն չէի ստանձնի: Սակայն տուեալ դէպքում պահանջները ներկայացնելու իրաւական ուղիները չպէտք է ընկալել միայն իրաւական վէճերում»:

2014-ին Նուազել Են Հայաստան Եկող Մասնաւոր Տրանսֆերտները

2014 թուականին 7.7 տոկոսով նուազել են Հայաստան եկող մասնաւոր տրանսֆերտները:

Կենտրոնական բանկի հրապարակած տուեալների համաձայն, եթէ 2013-ին հայաստանեան բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք է եղել 2 միլիարդ 302 միլիոն ԱՄՆ դոլար, ապա 2014-ին՝ 2 միլիարդ 123 միլիոն ԱՄՆ դոլար:

2013-2014թթ. Հայաստան եկող մասնաւոր տրանսֆերտների աւելի քան 80 տոկոսը Ռուսաստանից ու Միացեալ Նահագներից էր: Ընդ որում, եթէ 2014 թուականին նախորդ տարուաջ հետ համեմատած ԱՄՆ-ից տրանսֆերտների ծաւալը աճել է (2013թ.՝ 152.7 միլիոն ԱՄՆ դոլար, 2014թ.՝ 155.6 միլիոն ԱՄՆ դոլար), ապա Ռուսաստանի դէպքում դրամական փոխանցումները նկատելիօրէն կրճատուել են: 2013թ. Ռուսաստանից ֆիզիկական անձանց անունով փոխանցուել է 1 միլիարդ 727 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ 2014թ.-ին 1 միլիարդ 554 միլիոն դոլար, բացասական տարբերութիւնը կազմում է աւելի քան 10 տոկոս:

Տնտեսագէտների կանխատեսմամբ, 2015-ին Հայաստան եկող մասնաւոր տրանսֆերտների ծաւալը շարունակելու է կրճատուել, քանի որ ֆիզիկական անձանց անու-

նով փոխանցումների զերակշիռ մասը Ռուսաստանից է, իսկ այնտեղ այս տարի սպասում է տնտեսական անկում:

2014թ. ընթացքում Ռուսաստանից եկող մասնաւոր տրանսֆերտների ծաւալը աստիճանաբար կրճատուած էր: Այսպէս, եթէ 2014թ. Մայիսին՝ նախորդ Մայիսի հետ համեմատած քիչ էր փոխանցուել 1.1 տոկոս (2014թ. Մայիսին ֆիզիկական անձինք Ռուսաստանից փոխանցել էին 126.5 միլիոն ԱՄՆ դոլար՝ 2013թ. Մայիսի 128 միլիոնի դիմաց), 2014թ. Օգոստոսին՝ նախորդ Օգոստոսի հետ համեմատած անկումը աւելի քան 9 տոկոս էր (2014թ. Օգոստոսին Ռուսաստանից Հայաստան փոխանցուել է 167.7 միլիոն ԱՄՆ դոլար՝ 2013թ. Օգոստոսի 184.4 միլիոնի դիմաց), 2014թ. Հոկտեմբերին քիչ էր փոխանցուել մօտ 18 տոկոս (2014թ. Հոկտեմբերին փոխանցուել է 145.7 միլիոն ԱՄՆ դոլար՝ 2013թ. Հոկտեմբերի 177.9 միլիոն ԱՄՆ տոլարի դիմաց), ապա 2014 թուականի Դեկտեմբերին՝ նախորդ Դեկտեմբերին հետ համեմատած Ռուսաստանից քիչ է փոխանցուել աւելի քան 37 տոկոս (2014թ. Դեկտեմբերին փոխանցուել է 108 միլիոն ԱՄՆ դոլար՝ 2013թ. Դեկտեմբերի 171.9 միլիոնի դիմաց):

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱԿԱՍԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՋԱԼԱԽՔԱՀԱՅԵՐԸ ԿՐ ՋՐԿՈՒԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԵՆԵՆ

Ջալախքահայերը զանգուածաբար կը գրկուին Վրաստանի քաղաքացիութենէն երկրորդ՝ Հայաստանի կամ Ռուսիոյ քաղաքացիութիւն ունենալու պատճառով:

Ինչպէս կը փոխանցէ «Մետիամաքս»-ը, այդ մասին յայտնած է թիֆլիսեան «Ռեզոնանսի» թերթը:

«Բազմազգ Վրաստան» կազմակերպութեան ղեկավար Առնոլտ Ստեփանեանը թերթին հաստատած է, որ վերջին 5 ամիսներու ընթացքին այդ գործընթացը ազդած է «երկուքէն երեք հազար ՀՀ քաղաքացիներու վրայ»:

Անոր խօսքով՝ ատիկա շատ կը բարդացնէ մարդոց կեանքը, քանի որ Վրաստանի քաղաքացիութիւնը կորսնցնելու պարագային անոնք չեն կրնար Վրաստան գտնուիլ աւելի քան 90 օր շարունակ:

Ի դէպ, ինչպէս նշած է Առնոլտ Ստեփանեանը, վերջին շրջանին տեղի իշխանութիւնները սկսած են հաշուի առնել յառաջացած խնդիրները եւ աւելի հեշտութեամբ ժամանակաւոր կեցութեան թոյլտուութիւն կը տրամադրեն անոնց, որոնք արդէն գրկուած են Վրաստանի քաղաքացիութենէն: Ան նշած է, որ Ջալախքի մէջ բնակող հայերուն Վրաստանի քաղաքացիութենէն գրկելը «լրացուցիչ վրանգներ» կը

յառաջացնէ տարածաշրջանին մէջ:

«Գործ ունինք իշխանութիւններու մէջ ոչ արհեստավարժութեան կամ խափանաբարութեան հետ», - ըսած է Առնոլտ Ստեփանեանը:

Մինչդեռ Վրաստանի արդարադատութեան նախարարութենէն թերթին ըսած են, որ հայերուն քաղաքացիութենէն զանգձային գրկելու մասին լուրերը չեն համապատասխաներ իրականութեան:

Սակայն «Ազատ Վրաստան» կուսակցութեան ղեկավար Կախա Կուկաւան, որ ուսումնասիրած է հարցը, հաստատած է «Ռեզոնանսի»-ին տուած լուրը, որ Ջալախքահայերը զանգուածաբար կը գրկեն Վրաստանի քաղաքացիութենէն: Ան ըսած է, որ այդ մասին տեղեակ պահած է Վրաստանի կեդրոնական իշխանութիւնները, սակայն անոնք դեռ չեն արձագանգած:

«Ասիկա նուրբ հարց է, որուն պէտք է զգուշութեամբ մօտենալ: Պէտք է բացատրական աշխատանքներ տանել ընակցութեան հետ, ըսել անոնց, որ իրենք պէտք է ինքնուրոյն ընտրեն, որ երկրի քաղաքացիութիւն ունենան, որպէսզի յետագային խուսափին քաղաքացիութենէն», - կարծիք յայտնած է քաղաքագէտ Սոսօ Յինցաձէն:

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ՅՈՐԴԱՆԱՆՑԻ ՊԱՏԱՆԴ ՕԴԱՉՈՒՆ ՅՐԿԻԶՈՒԱԾ

Անցեալ Դեկտեմբերի յորդանանցի օդաչու Մուսա Գասսահայէյի իր F-16 պատերազմական օդանաւով Սուրիոյ իսլամիսթներու դէմ (ISIS) թռիչքի պահուն իր օդանաւը վար առնուած էր, իսկ ինք պատանդ կը պահուէր ծայրայեղականներու կողմէ: Այս կապակցութեամբ շաբաթներէ ի վեր Յորդանանի իշխանութիւնները բանակցութեանց մէջ էին ճիշատիսթներու հետ: Ոստիկան կար որ 24 ամեայ օդաչուն պիտի փոխարինուէր իրաքի կնոջ մը հետ, որ ձերբակալուած էր անձնասպանական արարք մը գործադրելու մեղադրանքով:

Ստացուած վերջին տեղեկութեանց համաձայն իսլամական Պետութիւն կազմակերպութիւնը հրապարակեց տեսագրութիւն մը, որուն մէջ բացայայտեց օդաչու Գասսահայէյի մահապատիժի ենթարկումը՝ գայն հրկիզելու միջոցաւ: Այդ տեղեկութիւնը հաստատեց յորդանանեան բանակը, որ կապ հաստատեց Քէսէսիպէյի ընտանիքին հետ եւ տեղեկացուց օդաչուի սպանութեան մասին: Իսկ Յորդանանի պետական հեռատեսիլի կայանը նշեց, որ Քէսէսիպէյի սպանութիւնը տեղի ունեցած էր ամիս մը առաջ՝ Յունուար 3-ին, սակայն այդ մասին ՏԱՀԷՇ յայտաբարեց երէկ:

Յորդանանի գինուած ուժերը հաղորդագրութեամբ մը յայտարարեցին, որ պիտի լուծեն իրենց սպաննուած ընկերոջ վրէժը, իսկ պահուցման տեղեկութիւնները նշեցին, որ իշխանութիւնները գործադրած են իսլամիստ քանի մը բառարկեալներու դէմ հրապարակուած մահապատիժի դատավճիռները: Յորդանանի Ապտալլա Բ. Թագաւորը ընդհատեց իր Ուաշինկթըն աչքելութիւնը եւ վերադարձաւ երկիր՝ հետեւելու համար զարգացումներուն:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ՕԴԱՆԱԲԵՐԸ ԿՐ ՈՒՄԲԱԿՈՃԵՆ ՅԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Երկուշաբթի օրունէն ի վեր Սուրիոյ վարչակարգի օդուժը սկսաւ օդանաւային ուժեղ յարձակումներ գործել երկրի տարբեր շրջաններու ընդդիմադիր համախմբումներու վրայ: Ռմբակոծումները առաւելաբար իրենց թիրաք ընտրած էին Տարաա գաւառի հակավարչակարգային կեդրոնացումները, մեռեալներու եւ վիրաւորներու թիւը հասնելով 40ի: ՄԱԿի տեղեկատուութեան համաձայն 2011 թուականի Մարտ ամիսէն սկսեալ Սուրիոյ քաղաքացիական կռիւններուն ցարդ գոհ գացած է աւելի քան 220,000 հոգի:

ԻՐԱՔԻ ՔԻՐՏԵՐՈՒ ԲՈՒՈՆ ՊԱՅՔԱՐԸ ISISԻ ԴԵՍ

Հիւսիսային Իրաքի քրտական Մուսնի շրջանի եւ Սինճար լեռան ստորոտը գտնուող գինեալ քիւրտերն այս օրերուն կատաղի մարտեր կը մղեն «իսլամական պետութիւն» կոչուող ծայրայեղականներու դէմ (ISIS): Արդարեւ քրտական «փէյձէրկա» գինեալ ջոկատները միայն կէս քիլոմետր հեռաւորութիւն ունին իսլամ ծայրայեղականներէն: Քիւրտերը կը վայելեն ԱՄՆ-ի եւ իրեն համագործակցող երկիրներու գինեալ աջակցութիւնը, մասնաւորաբար կործանիչ օդանաւերու միջոցով:

ՋԸԶՊԱԼԼԱՅՔ՝ ՕԺՏՈՒԱԾ ԱՐԴԻԱԿԱՆ ՅՐԹԻՈՆԵՐՈՎ

Լիբանանի «Հրգպալլահ» կուսակցութեան ղեկավար Շէյխ Հասան Նասրալլահ, լրագրողներու առջեւ յայտարարութիւն մը կատարած է վերջին դէպքերու լոյսին տակ: Ան յատկապէս նշած է որ այլեւս իսրայէլ չի կրնար անպատիժ մնալ «Ունինք այնպիսի գերարդիական գէնքեր, որոնք կրնան ուժեղացնել իսրայէլի ամենահեռաւոր քաղաքներն ու շրջանները: Խելքէ եւ միտքէ չանցած գէնքեր ամբարած ենք: Անպատիժ պիտի չմնայ իսրայէլ եւ շատ սուղ պիտի վճարէ օդային ուժակոծումներուն համար», - ըսած է ան:

ԳԱՅԻՐԵԻ ՄԷՋ ԻՍԼԱՄԻՍՏ 3 ՈՍՏԻԿԱՆՆԵՐ ՍՊԱՆՆԵՑԻՆ

Վերջերս Գահիրէի մէջ ուռմբ մը պայթելով 3 եգիպտացի ոստիկաններ սպաննուեցան եւ քանի մը ուրիշներ վիրաւորուեցան: Այս առթիւ իսլամիստ ծայրայեղականները յայտարարութիւն մը հրապարակելով խոստովանեցան որ իրենք են այդ արարքին հեղինակները: Արդարեւ սպանեալներէն մին գլխաւոր վկան պիտի ըլլար պաշտօնանկ եղած նախագահ Մօրսիի դատավարութեան ընթացքին: Իսկ Մօրսին իր նախագահութեան շրջանին պետական գաղտնիքներ փոխանցած էր Քաթարի իշխանութիւններուն: Նշենք նաեւ որ լրտեսութեամբ ամբաստանուած նախկին նախագահ Մօրսիի դատավարութիւնն պիտի սկսի Փետրուարի 15ին:

Կիրառումն ու նշանակութիւնը վաղ եկեղեցու կեանքում եւ դրա գործառույթը եկեղեցական հաղորդութեան այժմէական ուսումնասիրութեան համար» խորագրով:

Ղպտի Ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչների հրաւերով յանձնարարելով յաջորդ հանդիպումը տեղի կ'ունենայ Գահիրէում (Եգիպտոս) 2016 թ. Յունուարի 30-ից Փետրուարի 6-ը:

Ո՛չ Բռնութեանը

Շարունակուած էջ 2-էն

վերաբերում... ուղում եմ մի հատ սիրլով տամ բերնին»: Երէկ մեր թղթակցի հետ զրոյցում նմանատիպ, եթէ չասենք՝ աւելի տխուր, յայտարարութիւններ են արել նա-

եւ ՀՀԿ «ինտելեկտուալները»՝ ապացուցելով, որ բռնութիւնն ընդունելի է, եթէ համընկնում է իրենց շահերին, եթէ ուղղուած է իրենց «թշնամիներին» դէմ, եթէ օգնում է ավթոնները պահպանելուն: «ՀՐԱՊԱՐԱԿ»

Աստուածաբանական երկխօսութեան միջազգային միացեալ յանձնախմբի ժողով Քոնոնում



Յունուարի 24-31-ը Հռոմում (Իտալիա) տեղի ունեցաւ Կաթոլիկ եկեղեցու եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիների միջեւ Աստուածաբանական երկխօսութեան միջազգային միացեալ յանձնախմբի հերթական, 12-րդ հանդիպումը: Աստուածաբանական երկխօսութեան թեման վերաբերում էր Եկեղեցական խորհուրդներին՝ կրելով «Եկեղեցական խորհուրդների պատմական զարգացումն ու աստուածաբանութիւնը» խորագիրը: Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցու կողմից միջազգային աստուածաբանական յանձնախմբին մասնակցում էին ԱՄՆ Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաթալ արքեպիսկոպոս Պարսամեանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական յարաբերութիւնների բաժնի պատասխանատու եւ Արթիկի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովակիմ եպիսկոպոս Մանուկեանը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Պաշտօնական մամուլի

եւ Հրատարակչական բաժնի տնօրէն Հոգեշնորհ Տ. Շահէ վարդապետ Անանեանը: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կողմից ժողովին մասնակցում էին Գերաշնորհ Տ. Նարեկ արքեպիսկոպոս Ալեմեգեանը եւ Գերաշնորհ Տ. Մակար եպիսկոպոս Աշգարեանը: Յանձնախմբի անդամները Յունուարի 25-ին մասնակցեցին նաեւ Հռոմի Սուրբ Պողոս տաճարում տեղի ունեցած «Քրիստոնեաների միութեան» աղօթքին՝ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս պապի նախագահութեամբ: Յունուարի 30-ին Աստուածաբանական միջազգային յանձնախմբի անդամները հիւրընկալուեցին Հռոմի քահանայապետ Ֆրանցիսկոս պապի կողմից: Քննարկումների արդիւնքում ամբողջացաւ ու վերջնական տեսքի բերուեց Կաթոլիկ եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիների աստուածաբանական յանձնախմբի կողմից հրապարակուող երկրորդ փաստաթուղթը՝ «Հաղորդութեան

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովը, համախորհուրդ սփիւռքում գործող տարածաշրջանային յանձնախմբերի հետ՝

- արտայայտելով հայ ժողովրդի միասնական կամքը,
- յենուելով 1990 թուականի Օգոստոսի 23-ի՝ Հայաստանի անկախութեան մասին հռչակագրի եւ Հայաստանի Հանրապետութեան Մահմանադրութեան վրայ՝

- վկայակոչելով ՄԱԿ-ի 1948 թուականի Դեկտեմբերի 10-ի՝ Մարդու իրաւունքների համընդհանուր հռչակագիրը, որի համաձայն «մարդկութեան ընտանիքի բոլոր անդամներին յատուկ արժանապատուութեան եւ հաւասար ու անօտարելի իրաւունքների ճանաչումն աշխարհի ազատութեան, արդարութեան եւ խաղաղութեան հիմքն է»,

- ղեկավարուելով ՄԱԿ-ի Գլխաւոր վեհաժողովի 1946 թուականի Դեկտեմբերի 11-ի 96(1) բանաձեւի, 1948 թուականի Դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, 1968 թուականի Նոյեմբերի 26-ի «Պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների նկատմամբ վաղեմութեան ժամկէտ չկիրառելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպէս նաեւ 1966 թուականի Դեկտեմբերի 16-ի «Քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքների մասին միջազգային դաշնագրի եւ մարդու իրաւունքների վերաբերեալ բոլոր այլ միջազգային ակտերի համապատասխան սկզբունքներով եւ դրոշմներով,

- հաշուի առնելով, որ «Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին կոնվենցիան ընդունելիս ՄԱԿ-ը յատուկ կարեւորել է այդ յանցատեսակի դէմ պայքարում միջազգային համագործակցութիւնը,

- շեշտելով ցեղասպանութեան յանցակազմում պարունակուող արարքների համար անպատիժ մնալու անթոյլատրելիութիւնն ու այդ յանցագործութեան վաղեմութեան ժամկէտ չունենալու հանգամանքը,

- դատապարտելով 1894-1923 թուականներին Օսմանեան կայսրութեան եւ Թուրքիայի տարբեր վարչակարգերի կողմից ծրագրուած ու հայ ժողովրդի դէմ շարունակաբար իրականացուած ցեղասպանական քայլերը, հայրենազրկումը, հայրութեան ոչնչացմանն ուղղուած զանգուածային կոտորածները, էթնիկ զտումները, հայկական ժառանգութեան ոչնչացումը, ինչպէս նաեւ ցեղասպանութեան ժխտումը, պատասխանատուութիւնից խուսափելու, կատարուած յանցագործութիւններն ու դրանց հետեւանքները լուրջութեան մատնելու կամ արդարացնելու բոլոր փորձերը՝ որպէս յանցագործութեան շարունակութիւն եւ նոր ցեղասպանութիւններ իրականացնելու քաջալերանք,

- համարելով նաեւ 1919-1921 թուականներին Օսմանեան ռազմական արտակարգ ատեանների կողմից «իրաւական եւ մարդկային օրէնքների դէմ» Այդ ծանր ոճրի ուղղութեամբ կայացուած դատավճիռները եղելութեան իրաւական գնահատական,

- արժեւորելով 1915 թուականին միջազգային հանրութեան կողմից Անտանտի պետութիւնների Մայիսի 24-ի համատեղ հռչակագրով հայ ժողովրդի դէմ իրականացուած ծանրագոյն յանցագործութիւնը պատմութեան մէջ առաջին անգամ որպէս «Մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ իրականացուած յանցագործութիւն» Որակումը եւ օսմանեան իշխանութիւններին պատասխանատուութեան կանչելու հանգամանքի շեշտադրումը, ինչպէս նաեւ 1920 թուականի Օգոստոսի 10-ի Սեւրի հաշտութեան պայմանագրի եւ 1920 թուականի Նոյեմբերի 22-ի՝ ԱՄՆ-ի Նախագահ Վուդրո Ուելսոնի իրաւարար վճռի դերը եւ նշանակութիւնը Հայոց ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում:

1. Ոգեկոչում է Հայոց ցեղասպանութեան մէկուկէս միլիոն անմեղ զոհերի յիշատակը եւ երախտագիտութեամբ խոնարհուած կեանքի ու մարդկային արժանապատուութեան համար պայքար մղած նահատակ եւ վերապրած հերոսների առջեւ:



2. Վերահաստատում է Հայաստանի եւ հայ ժողովրդի յանձնառութիւնը՝ շարունակելու միջազգային պայքարը ցեղասպանութիւնների կանխարգելման, ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդների իրաւունքների վերականգնման եւ պատմական արդարութեան հաստատման համար:

3. Ծնորհակալութիւն է յայտնում այն պետութիւններին, միջազգային, կրօնական եւ հասարակական կազմակերպութիւններին, որոնք քաղաքական խիզախութիւն ունեցան ճանաչելու եւ դատապարտելու Հայոց ցեղասպանութիւնը՝ որպէս մարդկութեան դէմ ուղղուած սոսկալի ոճրագործութիւն, եւ այսօր էլ շարունակում են այդ ուղղութեամբ իրաւական քայլեր ձեռնարկել, նաեւ կանխել ժխտողականութեան վտանգաւոր դրսեւորումները:

4. Երախտագիտութիւն է յայտնում այն ազգերին, կառույցներին եւ անհատներին, ովքեր յաճախ իրենց վտանգելով՝ մարդասիրական տարաբնոյթ օգնութիւն ցուցաբերեցին, փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջեւ կանգնած բազմաթիւ հայերի, ապահով եւ խաղաղ պայմաններ ստեղծեցին ցեղասպանութիւնից վերապրած հայրութեան համար՝ մեծ թափ հաղորդելով որբախնամ գործունէութեանը եւ միջազգային հայասիրական շարժմանը:

5. Դիմում է ՄԱԿ-ի անդամ պետութիւններին, միջազգային կազմակերպութիւններին, բարի կամքի տէր բոլոր մարդկանց՝ անկախ ազգային եւ կրօնական պատկանելութիւնից, միաւորել իրենց ջանքերը պատմական արդարութիւնը վերականգնելու եւ Հայոց ցեղասպանութեան զոհերի յիշատակը յարգելու համար:

6. Արտայայտում է Հայաստանի եւ հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանութեան փաստի համաշխարհային ճանաչման հանելու եւ ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման հարցում, ինչի համար մշակում է իրաւական պահանջների թղթածրար՝ դիտելով այն անհատական, համայնքային եւ համազգային իրաւունքների եւ օրինական շահերի վերականգնման գործընթացի մեկնարկ:

7. Դատապարտում է Թուրքիայի Հանրապետութեան կողմից Հայաստանի Հանրապետութեան ապօրինի շրջափակումը, միջազգային հարթակներում ցուցաբերուող հակահայկական կեցուածքը եւ միջպետական յարաբերութիւնների կարգաւորման համար նախապայմանների առաջադրումը՝ դրանք գնահատելով որպէս Հայոց ցեղասպանութեան, Մեծ Եղեռնի մինչ օրս անպատիժ մնալու հետեւանք:

8. Կոչ է անում Թուրքիայի Հանրապետութեանը՝ ճանաչել եւ դատապարտել Օսմանեան կայսրութեան կողմից իրականացուած Հայոց ցեղասպանութիւնը եւ մարդկութեան դէմ իրագործուած այդ սոսկալի ոճրի զոհերի յիշատակը ոգեկոչելու միջոցով աւերեսուել սեփական պատմութեան ու յիշողութեան հետ՝ հրաժարուելով կեղծարարութեան, անհերքելի իրողութեան ժխտման եւ յարաբերականացման քաղաքականութիւնից:

9. Զօրակցում է Թուրքիայի քաղաքացիական հասարակութեան այն հատուածին, որի ներկայացուցիչներն այսօր արդէն համարձակութիւն են դրսեւորում այդ հարցում՝ ի հակադրութիւն իշխանութիւնների պաշտօնական դիրքորոշման:

10. Յոյս է յայտնում, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչումը եւ դատապարտումը կարեւոր մեկնակէտ կը դառնան հայ եւ Թուրք ժողովուրդների պատմական հաշտեցման գործընթացի համար:

11. Հպարտութեամբ է արձանագրում, որ ցեղասպանութիւնից վերապրած հայ ժողովուրդը վերջին հարիւրամեակի ընթացքում՝

- դրսեւորեց անկոտրում կամք ու ազգային ինքնագիտակցութիւն, վերականգնեց դարեր առաջ կորցրած ինքնիշխան պետականութիւնը,

- պահպանեց եւ զարգացրեց ազգային արժէքները, հասաւ ազգային մշակույթի, գիտութեան եւ կրթութեան վերածննդի՝ ուրոյն ներդրում ունենալով համաշխարհային ժառանգութեան զարգացման գործում,

Շար.ը էջ 20

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաժողո՞ւ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԸ ԽՍՏՕՐԷՆ ՔՆՆԱԴԱՏԱԾ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԱԿԱՆ ՔԱՐՈՋԻՉՆԵՐԸ

ՅԱՐՈՒԹ ՄԱՍՈՒՆԵԱՆ

Հայաստանի հրեական համայնքի նախագահ Ռիմա Վարժապետեան-Ֆելլեր վերջերս կործանարար յօդուած մը գրեց «Համաշխարհային Հրեականութիւնը Ձի կրնար Գործիք Դառնալ Հակահայ Քարոզիչներու Ձեռքին» վերնագիրով: Ան քննադատեց բոլոր անոնք, որոնք կ'իրականացնեն նման քարոզչութիւն՝ գրելով «պատուիրուած եւ միակողմանի յօդուածներ... շահադիտական նկատաւորներով»:

Նման գրողները կը փորձեն շահարկել Իսրայէլի քաղաքական շրջանակները եւ փառաբանել ատրպէյճանահարայէլեան յարաբերութիւնները, որոնք հիմնականօրէն բաղկացած են զէնք՝ քարիւղի դիմաց գործարքներէն, Հայաստանը մեկուսացնելու եւ թուլացնելու նպատակով:

Ֆելլեր որպէս հակահայկական քարոզչութեան օրինակներ կը նշէ Մաքսիմ Կոուլինի եւ Ալեքսանտր Մուրինսընի կողմէ «Հարեց»ի (Haaretz), Արիէ Կուլթի կողմէ JNS.com-ի եւ Ալեքսանտր Մուրինսընի կողմէ «Տը Հիլ»ի (The Hill) մէջ տպագրուած վերջին յօդուածները:

Ըստ Ֆելլերի՝ «միայն այս հեղինակներու կենսագրութիւնն ու գործունէութիւնը արդէն կասկած չեն ձգեր անոնց վերլուծութիւններուն միակողմանիութեան մասին: Հայաստանը որպէս հակասեմական երկիր ներկայացնող Մաքսիմ Կոուլին հրապարակայնօրէն կը սատարէ Թուրքիոյ ծայրայեղ աջ, ազգայնական շարժում կուսակցութեան: Այս կուսակցութիւնը, Հայոց Յեղապահութեան բացայայտ ժխտողական կեցուածքէն բացի, յայտնի է նաեւ հակասեմականութեան եւ այլատեսացութեան քարոզչութեամբ: Սակայն, Կոուլին աչք կը փակէ այս հանգամանքին վրայ»:

Այնուհետեւ Ֆելլեր կը պնդէ, որ «չատոնց արդէն ատրպէյճանական քարոզչամեքենայի ծառան դարձած Արիէ Կուլթը նաեւ Իսրայէլ-Ատրպէյճան միջազգային կազմակերպութեան անդամ է: Ալեքսանտր Մուրինսընը իր դոկտորական թեզին մէջ որպէս իրականութիւն կը ներկայացնէ այն, որ Ատրպէյճանը, Թուրքիան եւ Իսրայէլը դաշնակիցներ են, ինչպէս նաեւ կը զարգացնէ այն միտքը, որ այդ երկիրներէն որեւէ մէկուն թշնամին այդ եռեակի հակառակորդն է»:

Հայաստանի մէջ հրեական համայնքի ղեկավարը կը բացատրէ, որ հակասեմականութիւն գոյութիւն ունի աշխարհի բոլոր անկիւններուն, ինչպէս նաեւ՝ Հայաստանի մէջ: Սակայն նման դրսևորումները, ըստ Ֆելլերի, «երբեք չեն վայելեր ոչ միայն իշխանութիւններուն, այլ նաեւ քիչ թէ շատ ազդեցիկ հասարակական կամ քաղաքական ուժերու աջակցութիւնը վայելողներուն: Հայաստանի մէջ հրեական համայնքը իրեն կը զգայ պաշտպանուած եւ կը վայելէ իշխանութիւններուն յարգանքը իր իրաւունքներուն, մշակոյթին եւ սովորոյթներուն նկատմամբ»:

Ֆելլեր խիստ քննադատական արտայայտուած է Ալիւի հասցէին. «Գաղտնիք չէ, թէ Ատրպէյճանի բռնակալը ինչ մեթոտներ կը

կիրառէ Արեւմուտքի մէջ կարծիքի ձեւաւորման համար. ըստ հուլիան, ատոր անդրադարձած են շատ հեղինակաւոր լրատուամիջոցներ, ինչպէս օրինակ «Նիւ Եորք Թայմզ»ը 2014ի Սեպտեմբերին եւ Foreign Policy ամսագիրը 2014ի Յունիսին: Միջազգային ազդեցիկ հրեական կառույցները պէտք չէ թոյլ տան իրենք իրենց ներքաշել նման շահարկումներու մէջ»:

Ֆելլեր կը նշէ նաեւ Ատրպէյճանի մէջ տեղ գտած քանի մը մոլեռանդ հակասեմական օրինակներ. «1990ական թուականներուն, երբ Ատրպէյճանի ժողովրդական ճակատի յելուզակները կը կազմակերպէին եւ կ'իրականացնէին այնտեղի հայ բնակչութեան կոտորածներն ու տեղահանութիւնները, անոնց ամենատարածուած կարգախօսներէն մէկն էր՝ «Ատրպէյճանը կը ծաղկի առանց հայերու եւ հրեաներու»: Որքան

ալ Ատրպէյճանի իշխանութիւնները փորձեն իրենք իրենց ներկայացնել որպէս Իսրայէլի բարեկամ, անոնք չեն կրնար ըլլալ հրեաներուն բարեկամը: Եթէ ոեւէ մէկուն մօտ այս փաստարկը կասկած կը չարուցանէ, կը խնդրեմ կարդալ ալիւեան վարչակարգին կողմէ մարդու իրաւունքներու խախտման վերաբերեալ բազմաթիւ ճշացող դէպքերու մասին հրապարակումները, կամ առնուազն Եւրոպայի մէջ հակասեմական ցոյցեր ֆինանսաւորելու վերաբերեալ յօդուածները: Կասկածէ վեր է, որ Ատրպէյճան կ'օգտագործէ իրանի եւ Իսրայէլի հետ իր յարաբերութիւնները՝ Իսրայէլի մէջ ինքզինք ներկայացնելով որպէս հակա-իրանեան քաղաքականութեան ամենավստահելի գործընկեր: Ակնյայտ է, որ Ատրպէյճանի ղեկավարները շատ վտանգաւոր խաղ կը խաղան, եթէ կը կարծեն, որ կրնան Իսրայէլն ու համաշխարհային հրեականութիւնը օգտագործել իրենց անհատական շահերը առաջ տանելու համար»: Այնուհետեւ հրեական համայնքի արդարամիտ ղեկավարը կը

Սրբոց Ղեւոնդեանց Քահանայից Տօնին օրը, Երեքշաբթի, Փետրուար 10ին, Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հրաւերով եւ նախագահութեամբ, Առաջնորդարանի մէջ պիտի գումարուի այս տարուան Հոգեւորականաց Առաջին Համագումարը, որուն առաջին անգամ ըլլալով Առաջնորդ Սրբազան Չոր հրաւերով պիտի մասնակցին Գանատահայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեան եւ Հոգեւորականաց Դասը: Իսկ Արեւելեան Թեմն ու Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաթակ Արքեպիսկոպոս Պարսամեանը պիտի ներկայացնէ Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ. Աճէմեան: Առաւօտեան ժամը 9:00ին Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարին մէջ պիտի կատարուի ժամերգութիւն, ապա «Համբար» դահլիճին մէջ պիտի սկսի համագումարը,


որը ընթացքին Հոգւ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտրմեան պիտի ներկայացնէ հետեւեալ երկու բանախօսութիւնները՝ «Ապաշխարութեան եւ Խոստովանանքի Աստուածաբանական Բովանդակութիւնը» եւ «Անհատական Խոստովանանք»-ին կարեւորութիւնը (համաձայն Հայ Եկեղեցական Մտածողութեան): Իրենց զեկոյցներն ու Թեմական ծրագիրները պիտի ներկայացնեն Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան եւ Գերշ. Տ. Աբգար Եպիսկոպոս Յովակիմեան: Իսկ Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ. Աճէմեան պիտի ընթերցէ Արեւելեան Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Խաթակ Արքեպիսկոպոս Պարսամեանի ողջոյնի խօսքը եւ տեղեկութիւններ պիտի փոխանցէ Արեւելեան Թեմի հոգեւոր առաքելութեան եւ ապագայ ծրագիրներու մասին: Ողջոյնի խօսքով հանդէս պիտի գայ նաեւ Երուսաղէմէն հիւրաբար ժամանած Հոգւ. Տ. Բագրատ Վրդ. Պուրճէքեան:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ


Yes, I wish to subscribe to Massis Weekly
 Enclosed a check for (one year)
 * \$50,00 * \$100,00 (first class) for USA
 \$ 100,00 (Air Mail) for Canada.
 \$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
 Address: -----
 City: ----- State:----- Zip Code:-----
 Country: -----
 Tel:----- Fax: -----

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախառնակներու և մանուկներու Բայրոփրաքթիք բուժում:
 Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային և մկանային ցաւեր:
 Ինքնաշարժի վթարի հետեանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ ԵՐԿՕՐԵԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ «ՀԱՐԻՐԱՍԵԱԿ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ. ԳԵՏԵՒԱՆՔՆԵՐ ԵՒ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ» ՆԻԻԹՈՎ

Պաշտօնական Բացում

Հայկազեան համալսարանի եւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի կեդրոնական մարմինի կազմակերպութեամբ եւ հովանաւորութեամբ Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի, «Հարիւրամեակ Հայոց ցեղասպանութեան. հետեւանքներ եւ առաջադրանքներ» նիւթով գիտաժողովի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Շաբաթ, 31 Յունուար 2015-ին, Հայկազեան համալսարանի մէջ:

Գիտաժողովին բացումը կատարուեցաւ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն ունկնդրութեամբ: Ողջունի խօսքով հանդէս եկաւ Հայկազեան համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան: Հայկազեան համալսարանին անունով ողջունելէ ետք ներկաները՝ ան նկատել տուաւ, որ «Այսօրուան մեր ներկայութիւնը այս իւրաքանչեւ վայրին մէջ հետեւանք է մեր նախահայրերու անցած ուղիին: Հայկազեան համալսարանը Հայոց ցեղասպանութեան վկան է եւ կենդանի օրինակը, որովհետեւ հիմնուած է Եղեռնի նահատակ Արմենակ Հայկազեանի յիշատակին»:

Վեր. Հայտոսթեան նաեւ շեշտեց, որ «Պէտք է մեր կրած արդարութեան խոր հասկացողութիւնը օժտենք նաեւ քննադատական մտածողութեամբ: Մենք մեր դատին ժառանգորդներն ենք եւ բանական տէրերը»:

Ապա խօսք առաւ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի Լիբանանի կեդրոնական մարմինի անդամ՝ Շահան Գանտահարեան: Ան ըսաւ, թէ՛ պատահական չէ, որ Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած ձեռնարկներուն շարքին առաջինը տեղի կ'ունենայ Հայկազեան համալսարանի ակադեմիական միջավայրին մէջ, ինչ որ կը պայմանաւորուի նշեալ վայրին համասփիւռքեան մակարդակի վրայ ակադեմիական իւրաքանչեւ միջավայրի հանգամանքը: Այնուհետեւ Գանտահարեան յայտնեց, որ Հայոց ցեղասպանութեան նոր հրապարակուած Համահայկական հռչակագիրը իր առանցքային կէտերով պիտի հունակորէ Հայ դատի հետագայ ընթացքը իրաւաբաղադրական եւ բարոյագաղափարական առումներով: Ան նկատել տուաւ, որ գիտաժողովի բացում կատարելը հարիւր ամեակի Լիբանանի մէջ տեղի ունենալիք ձեռնարկներուն, կարեւոր երեւոյթ է այն առումով որ կը նախանշէ այն հիմնական շեշտադրումներն ու առանցքները, որոնք պիտի յատկանշեն հետագայ աշխատանքները:

Գանտահարեան փակեց իր խօսքը նշելով, որ «Հայ մտաւորներու ժամանակն այս փորձերը հիմնական նպատակ պիտի բերեն հայ ժողովուրդին առջեւ ծառայած խնդիրներուն լուծման եւ ճիշդ հունակորման աշխատանքներուն»:

Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի տնօրէն դոկտ. Անդրանիկ Տազեսեան ներկայացուց գիտաժողովի բացման նիստին հիւր բանախօսը՝ Լիբանանեան համալսարանի գրականութեան եւ մարդասիրական գիտութիւններու



դոկտորական բաժնի դասախօս, փրոֆ. Մասուտ Տահերը, որուն նիւթն էր «Հայկական հարցը համաշխարհայնացումի դարաշրջանին. ներկան եւ հեռանկարները»:

Փրոֆ. Մասուտ Տահեր նկատել տուաւ, որ նախորդ հարիւր տարիներուն, Հայկական հարցը կենդանի մնացած է շնորհիւ մշակութային, ընկերային եւ գեղարուեստական այլազան ձեռնարկներու, որոնք կազմակերպուած են հայ ժողովուրդի գոյն հատուածներուն կողմէ, ապա շարունակեց նշելով, որ խորհրդային Միութեան փլուզումով Հայաստանին առիթ տրուեցաւ հռչակելու իր անկախ հանրապետութիւնը: Սակայն կան հողամասեր, որոնք կը մնան վրաստանի իշխանութեան տակ, իսկ անդին Լեռնային Ղարաբաղը գիտարական տագնապի նիւթ է Ասորյէյճանի հետ, մինչ ամբողջ Արեւմտեան Հայաստանը, որ կ'ընդգրկէ հայութեան խորհրդանիշները, մանաւանդ՝ Արարատ լեռը, կը գտնուի թրքական իշխանութեան տակ:

Փրոֆ. Տահեր հաստատեց, որ Հայոց ցեղասպանութենէն հարիւր տարի ետք հայ ժողովուրդը աճող կշռոյթով կը շարունակէ իր պայքարը, հակառակ անոր որ մեծ պետութիւններուն կեցուածքները ազդու չեն եղած, իսկ միջազգային ընտանիքի գործելաձեւը կ'արտացոլացնէ կրակորականութիւնը՝ Հայոց ցեղասպանութեան դատապարտման խնդիրն գծով: Ցեղասպանութիւն, որ կը շարունակէ արիւնտա վէրք մնալ հայ ժողովուրդին համար եւ միջազգային խղճին վրայ:

Ան յայտնեց, որ խոստմնալից հեռանկարներ կան Հայկական հարցի խաղաղ լուծման համար: «Հայ ժողովուրդը գիտարական պատերազմ չի՛ մղեր թուրք պետութեան դէմ, այլ խաղաղ լուծում կը փնտռէ իր արդար դատին եւ կ'ուզէ բնականոն յարաբերութիւններ հաստատել թուրքիոյ հետ, մինչ թուրքիոյ կառավարութեան կեցուածքները կը միտին պարտադրել իրողապէս գոյութիւն ունեցող պայմաններու բնականոնացումը», - ըսաւ ան եւ շարունակեց՝ որ պայքարի հայ յառաջամարտիկները վաղուց գիտակցած են, թէ մեծ պետութիւններուն վստահիլը պարզ խաբկանք է, որովհետեւ այդ պետութիւնները միայն իրենց շահերը կը հետապնդեն:

Փրոֆ. Մասուտ Տահեր եզրափակեց իր խօսքը հարց տալով. «Կ'ուզենք վերահաստատել, որ ապագան միշտ կը պատկանի այն ժողովուրդներուն, որոնք կը տենչան ու կառչած կը մնան իրենց ճակատագրի տնօրինման արդար իրաւունքին, որքան ալ երկարի

լինել իրութեան աստուածային խոստումն է»:

Իրերայաջորդ Նիստեր Գիտաժողովի պաշտօնական բացման արարողութենէն անմիջապէս ետք տեղի ունեցաւ առաջին նիստը, որուն ընդհանուր խորագիրն էր «Ցեղասպանութեան հետեւանքները եւ անոնց վերացման միջազգային օրէնքի ուղիւն»:


Ներկայացուցեցան երկու զեկուցումներ: Առաջին զեկուցումը ներկայացուց հայրենի ակադեմիական դոկտ. Սուրէն Մանուկեան՝ նիւթ ունենալով «Հայոց ցեղասպանութեան ժողովուրդագրական, մշակութային, աշխարհագրական, տնտեսական եւ քաղաքական հետեւանքները», իսկ երկրորդ զեկուցումը ներկայացուց դոկտ. Վլատիմիր Վարդանեան՝ «Հայոց ցեղասպանութեան հետեւանքներուն վերացումը՝ միջազգային իրաւունքի միջոցներով» նիւթով:

Գիտաժողովին երկրորդ օրը՝ Կիրակի, 1 Փետրուար սկսաւ գիտաժողովին նուիրուած եկեղեցական պաշտամունքով, որուն պատգամաբերն էր վեր. դոկտ. Փոլ Հայտոսթեան:

Գիտաժողովին երկրորդ նիստին ընդհանուր խորագիրն էր «Միջազգային ընտանիքին հակազդեցութիւնը՝ ցեղասպանութեան եւ անոր շահագործումը՝ պետութիւններուն կողմէ»:

Նիստին երկու զեկուցումներուն նիւթերն էին՝ «Միջազգային համայնքին հակազդեցութիւնը՝ Հայոց ցեղասպանութեան ընթացքին եւ անկէ ետք» (զեկուցաբեր՝ դոկտ. Զաւէն Մսրըլեան, անգլերէնով) եւ «Հայոց ցեղասպանութեան չարաշահումը՝ պետութիւններու կողմէ՝ թուրքիոյ դէմ» (զեկուցաբեր՝ դոկտ. Սալէհ Զահէտտին, արաբերէնով):

Շաբ.ը էջ 19



PANEL DISCUSSION

ARMENIAN IDENTITY

in the 21st Century

ARMENIAN IDENTITY MOVEMENT

PANELISTS

<p style="font-size: small;">FR. VAZKEN MOVSESIAN <i>A Priest of the Armenian Church</i></p> <p style="font-size: small;">TOSLINE MATOSSIAN, Psy.D. <i>Clinical Psychologist and Mother</i></p> <p style="font-size: small;">MARAL VOSKIAN <i>Elementary Armenian Language Instructor at AGBU-MDS</i></p>	<p style="font-size: small;">EDGAR MARTIROSYAN <i>Attorney and Activist</i></p> <p style="font-size: small;">ARMEN MANUK-KHALOYAN <i>Armenian Studies and History Master's Candidate at CSUN</i></p> <p style="font-size: small;">KEVORK KURDOGHJIAN <i>UCLA Political Science Bachelor's Candidate</i></p>
---	---

February 22, 2014



at 3:00 pm

GLENDALE CENTRAL LIBRARY
222 East Harvard Street
Glendale, CA 91205

Free Admission

Library visitors receive 3 hours FREE parking across the street at The Market Place parking structure with validation at the Library Loan Desk

www.armenianidentity.org
email: info@armenianidentity.org

 /ArmenianIdentity
 /Armidentity

ՃՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐԻ ՊԱՅԾԱՌ ԴԵՔԻԱԹՆԵՐԸ 200 ՀԱՉԱՐԻՑ ԱՆՑԱԻ

ԴԱԼԱՐԻՆ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ



ԱՐՄՖՆՊՐԵՍ. 1999ին, երբ ԱՄՆ-ում ապրող ճանաչուած մտաւորական, «Քաջ Նազար» երգիծաթերթի խմբագիր Յովհաննէս Բալայեանը հիմնադրեց ծնողագուրկ երեխաների Սուրբ Ծննդի հիմնադրամը, Ռաֆայէլ Մինասեանը եօթ տարեկան էր եւ գտնուում էր մանկատանը:

Արամ իրաչաւորեանի մեծ համերգասրահ՝ Ծննդեան տօների հեթիաթը դիտելու նա եկել էր տղայի՝ Իշխանի հետ: Այսօր 15րդ անգամ հիմնադրամը կազմակերպել

յատուկ կոմիտիւթերներով հարստացուել է Երեւանի կոյրերի դպրոցը: Ըստ 15 տարիների սովորութեան, այս տարի եւս ֆոնտի Ս. Ծննդի խմբերը շրջեցին նաեւ Երեւանից շատ հեռու գտնուող գիւղերի մանկատունները հազարեր նուէրներ բաժանուեց կաղանդ պատուկին կարօտով սպասող երեխաներին:

Ինչպէս յայտնի է, Սփիւռքի մեր հարազատները ամէն տարի մարտին են անցկացնում եւ օգնում Հայաստանի կարիքաւոր մանուկ-ներին:



էր Ամանորի հանդէսներ: Տարիների ընթացքում դրանց մասնակցել են 200,000ից աւելի երեխաներ:

Անվախ Քաջ Նազարի Ամանորի արկածները այդ օրը դիտեցին մանկատաների, մանկապարտէզների, դպրոցների 5000ից աւելի մանուկներ: Բոլորը ստացան հիմնադրամի դրոշմով յատուկ Ամանորի տուփեր, երգեցին, պարեցին, ուրախացան:

Ըստ Անճեւոսեան հիմնադրամը պարտաւորուել է շարունակել իր տարիների ազնիւ գործը՝ վերանորոգել մանկատաներ, դպրոցներ, մանկապարտէզներ: Արդէն ֆոնտի ջանքերով հիմնադրամը վերանորոգուել են Խարբերդի հաշմանդամ երեխաների 3 յարկանոց դպրոցը, նաեւ Սպիտակի թիւ 1 դպրոցը, Պառաւաքարի մանկատուն դպրոցը, Դալար գիւղի հակաջածաւալ մանկատունը, ինչպէս նաեւ

Նոր Տարուայ ծրագրում, բացի շինարարական աշխատանքներից, ցեղասպանութեան 100 ամեայ տարելիցին Գիւմրիում հիմնադրամը կը կազմակերպի «Որբերի Գորգը» յուշապատում՝ ի յիշատակ ամերիկացիների կողմից հիմնուած կաղաչի Պոստի առաջին որբանոցի՝ Վահան Չերքազի ղեկավարութեամբ: Գոյնզգոյն թեւերով մանկատան սաների գործած գորգը, որը մէկ դարի պատմութիւն ունի, այսօր ցուցադրուում է ՄԱԿի սրահում:

Ըստ մեր տեղեկութիւնների, Հայաստանի ծնողագուրկ հաշմանդամ երեխաների Ամերիկայի ֆոնտի աշխատակազմը Յովհաննէս Բալայեանի գլխաւորութեամբ ծաւալուն ծրագրեր է մշակում էլ աւելի յաջողութիւնների ձեռք բերման եւ ամբողջ Ամերիկայի եւ Սփիւռքի հայութեան ընդգրկելու այս աստուածահաճոյ ֆոնտի շարքերում:

ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի գիտութիւն յայտնում ենք, որ մեր ֆոնտի կողմից ցանկացողներին արհարծէ կը տրամադրուի 2015 թուականի Ս. Ծննդեան տօների ամբողջ տեսարկովները, ինչո՞ւ չէ, նաեւ մեր գործունէութեան 15 տարիների ընթացքում իրագործուած ծրագրերի, յատկապէս Հայաստանի մանկա-տնների մեր շինարարութիւնների տեսարկովները, ձեռք մօտիկից ծանօթացնելու կատարուած աշխատանքների մասին: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՄԱՆԳՈՒՄ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՖՈՆՏ

ԼԻՒՍԻ ՍԻՒԼԱՆԱՆ

Այդ օր Դալարի ուրախութիւնը չափ ու սահման չ'ունէր: Հօրը ձեռքէն բռնած կը ջանար իր մանկական քայլերը հաւասարեցնել հօրը քայլերուն:

Իւրաքանչիւր քայլափոխին գանգ-րահեր մագերէն փնջիկ մը կ'իջնար ճակտին վրայ ու ձախ աչքը կը գոցէր: Դալար ձեռքով արագ յետ կը նետէր ըմբոստ մագի փնջիկը ու կը շարունակէր ցատկուտել հօրը կողքին:

Դալար կը սիրէր գնդակ խաղալ, հեծանիւ քշել եւ ընկերներուն հետ խաղցած ատեն միշտ ինքն էր առաջնորդը:

Մայրը գինք «Մանչ-Աղջիկ» կը կոչէր: Դալար կը սիրէր այդ մակերը: Իրեն համար այդ մայրական շոյանք մըն էր կարծես:

Հայրը որպէս Տնօրէն կը պաշտօնավարէր դեղօրայքի գործարանի մը մէջ: Նկարագրային գծով լուկեաց ու ինքնամփոփ էր: Կարգ ու կանոնը սիրող եւ ուրոյն գաղափարներու տէր էր: Օրինակելի բարեպաշտութեամբ ամէն կիրակի եկեղեցի կ'երթար ու միշտ առաջին կարգի նստարանին կը նստէր:

Դալար ինքն ալ կը սիրէր այդպէս խորանին դիմաց նստիլ: Յափշտակուած կը դիտէր պլպլացող մոմերու շարքը, վարդապետին մետաքսէ շողշողուն սքեմը, սրածայր վեղարը: Մանաւանդ երբ ան բազկատարած սկիհը գլխէն վեր կը բարձրացնէր ու կերկրուն ձայնով կը մըմնջէր:

«Առէ՛ք Կերէ՛ք Այս է Մարմին Իմ»

Դալար ամբողջ մարմնով կը սրսփար:

Եկեղեցիին սրբաշունչ մթնոլորտին մէջ բուրումնաւէտ խունկի գուլաներ աղանիի քնքոյշ փետուրներու թեթեւութեամբ կ'երերային օդին մէջ ապա շատուանի պղպջացող Չուրերու հանգոյն կ'իջնէին ու կը զգուէին Դալարի ճակատն ու այտերը ու կը լեցուէին ռուզերուն մէջ:

Ամէն անգամ որ վարդապետը բուրվաւոր աջ ու ձախ շարժէր, Դալար հոգեկան տարօրինակ զգայնութեամբ կը շնչէր անուշաբոյր ծուխը...:

Դալարին այնպէս կուզար որ հրեշտակներ կը թեւածէին սրբաշող վայրէն ներս:

Դալար կ'զգար արտառոց մը ճատուրումը իր սրտին:

Օդը անշնչելի կը դառնար: Դալար դժուար կը զսպէր կուրծքին տակ եռացող հազը «ասդմադիկ» հազը որ ինք ունէր մանկութիւնէն ի վեր:

Հազը ալիք - ալիք կոկորդէն վեր կը բարձրանար ու բերնէն դուրս կը ժայթքէր անկաշկանդ խանգարելով եկեղեցիին հոգեպարար մթնոլորտը:

Հայրը՝ ճակատը կնճռոտած՝ յօնքերը կիտած ամուր բռնեց Դալարի դաստակը ու ոտքի ելաւ: Դալար զգաց հօրը լուռ կշտամբանքը:

Երկիւղը պատեց հոգին...: Հայրը ոտքի մատներուն ծայրը կոխելով ծանրաքայլ ու խրոխտ դէպի դուռը յառաջացաւ, միշտ ամուր բռնած Դալարի դաստակէն:

Դուրսը՝ Դալար գաղտագողի նայեցաւ հօրը խոշոր ջղուտ

թաթին, որ աքցանած էր իր դաստակը: Հեկհեկոցը զսպեց ու լուռ սպասեց... վճիռին:

Հայրը ձգեց դաստակը: Դալար թեւերը կուրծքին վրայ խաչա-ձեւելով խզխզան մեղկ ձայնով եւ կեանք աղերսող յանցապարտի նման,

- Պա՛պա... կրցաւ թոթովել միայն:

- Հիմա՛ . . . ըսաւ հայրը ակներեւ դժգոհութեամբ, հիմա, ետ եկեղեցի պիտի մտնենք ու ես քու կատուի ձայնը լսել չեմ ուզեր... բնա՛ւ,-

Դալար գունատ ու շնչահատ ու սահմուկած նայեցաւ հօրը վախով լի: Դալարի վտիտ մարմինը կը դողդոջար ամբողջութեամբ:

Հայրը ջղագրգիւ գրպանէն թաշկինակը հանեց, ակնոցները սրբեց, տեղաւորեց քիթին ու մետաղեայ պրկութեամբ բռնեց Դալարի դաստակէն:

Անխօս... մտան եկեղեցի:

Հագիւ նստած Դալարի կուրծքը խժժալու սկսաւ: Ծնչառութեան հետ խունկի գաղջ ծուխը թունաւոր սողունի նման սպրդեցաւ թոքերուն մէջ: Դալար՝ ափով գոցեց բերանը ու դժնդակօրէն կլլեց հազի ալիքը որ կը սպառնար խեղդել գինք:

Դալարին մանկական հոգին տագնապի մէջ էր: Ան կը զգար հօրը ուժեղ ու ջլապինդ ներկայութիւնը իր կողքին . . .:

Ու գայն չնեղացնելու յուսահատ ճիգը անսովոր խոռովքի կը մատնէր իր փոքրիկ կուրծքը: Կուրծքին մէջ զսպուած հազը բազմալար կը սուլէր:

Դալար բարալիկ մատներով տրորեց կոկորդը:

Հարկուաւոր մօեղներ կը բզբզային խոչափողին մէջ եւ իւրաքանչիւր հազի ալիքին մարմինը ամբողջ կը ցնցուէր: Կուրծքը կը խժխժար:

Դալար ափով փակեց բերանը ու ժգնօրէն:

Դժնդակօրէն կլլեց հազը որ այլանդակ խոնչոցով կոկորդն ի վար իջաւ քարի պէս:

Կլլեց նաեւ թթուաճ խուխը: Բայց զսպուած հազը կուրծքին տակ կատուի մլաւոցի պէս կը բղաւէր ու կատուի պէս կը ճանկուտէր ներսիդին:

Վերջապէս . . . պատարազը վերջ գտաւ:

Հայրը Դալարին ձեռքէն բռնեց ու առանց ոեւէ ծանօթի կամ բարեկամի հետ տեսակցելու շտապեց տուն:

Երբ տուն հասան Դալար վազեց դէպի մայրը ու ծունկերուն փաթթեցաւ:

- Մանչ աղջիկս, ի՞նչ չարածճիւղութիւն ըրաւ այսօր -, հարցուց մայրը:

- Հա՛գ . . . հա՛ ա՛ գ ա՛ ցի, թոթովեց Դալար լացի հեւքով:

- Գնա՛ սենեակդ, պարպիովդ խաղցի՛ր,- յորդորեց մայրը:

Դալար վազեց դէպի իր սենեակը մահճակալին վրայ նետուեցաւ: Հողի ընդերքէն ժայթքող լաւայի պէս հազը կը շանգուէր կոկորդին լարերը:

Դալար գլուխը թաղեց բարձին տակ լալով, սրտամըմուռ հեծկլտանքներով: Լացա՛ւ ու հազա՛ց:

Հազոց ու լացա՛ւ սրտակեղէք:

Դալար ութ տարեկան էր եւ արդէն միայնակ ու դժբախտ կը զգար...:

ՇԱԲԱՐԱԽՏԻ ՆՊԱՍՏՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՕՆ ՄԸ

Յետ հոգեկան ցնցումի PTSD անհանգստությունը ընդհանրացած է ամերիկացի կիներու մօտ: Այս անհանգստությունը ծայր կ'առնէ traumatic դէպքէ մը ետք, որուն ակնատես կը դառնայ անհատը: Ըստ նորագոյն հետազոտութիւններուն, PTSD-ի հաւանականութիւնը ամերիկացի կիներու մօտ 10.4 առ հարիւր է: Ի դէպ, այս անհանգստությունը նաեւ սովորական է պատերազմի մաս կազմած զինուորներու մօտ, որոնց մասին վերջերս սկսած են անդրադառնալ ամերիկացի հոգեբանները: PTSD անհանգստութեան հետեւնաքննուած գծով վերջերս կատարուած ուսումնասիրութիւն մը յայտնա-

բերած է յարաբերական կապ մը՝ անհանգստութեան եւ երկրորդ տեսակի շաքարախտին միջեւ: PTSD-ով ախտաճանաչուած կիներու մօտ բաւական բարձր է երկրորդ տեսակի շաքարախտէ տառապելու վտանգը: PTSD-ի հիմնական ախտանշաններն են՝ անձկութիւնը, traumatic փոշիւնը հետ կապուած մշտական յիշողութիւն, քունի անկանոնութիւն, սրտի արագ տրոփում, եւ այլն: Այս ախտանշանները կը յայտնուին ցնցիչ փորձառութեան անմիջապէս ետք եւ կրնան երկարիւ տարիներու վրայ: Այս ուսումնասիրութեան մաս կազմած են մօտաւորապէս 50 հազար կիներ, իսկ ուսումնասիրութիւնը տեւած է 22 տարի:

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԾՇԳՐՏՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՕՆ ՄԸ

Ոճրաբանութեան հոգեբանութեան ծիրին մէջ կատարուած հետազոտութիւն մը կը պարզէ թէ աչքերը փակելը կը նպաստէ դէպք մը ճշգրիտ եւ մանրամասն յիշելու: Այս հետազոտութիւնը կատարուած է University of Surrey-ի ոճրաբանութեան բաժնի հետազոտական խումբին կողմէ, իսկ հետազոտութեան մաս կազմած են 178 անձեր: Ուսումնասիրութեան արդիւնքները ցոյց տուին թէ աչքերը փակելով յիշելու գործընթացը կը նպաստէ թէ՛ ձայնի եւ թէ՛ պատկերներու ճշգրիտ յիշողութեան: Ուսումնասիրութեան հեղինակ՝ Տոքթ. Ռոպերթ Նէշ կը բացատրէ թէ, թէեւ այս ուսումնա-

սիրութիւնը կրնայ պարզ թուիլ հանրութեան, անոր արդիւնքները կարեւոր են ոճրաբանութեան հոգեբանութեան ծիրին մէջ աշխատող անձերուն համար: Այս ուսումնասիրութեան գաղափարը ծնունդ առած է դատարաններու մէջ կատարուած դիտարկումներէն: Այս դիտարկումներու հիման վրայ վկաններուն մեծ մասը դատարաններու մէջ դէպքի մը վերաբերեալ իրենց վկայութիւնները փոխանցելու ժամանակ կը փակեն իրենց աչքերը: Այս երեւոյթը նաեւ կը պատահի դատարաններէն դուրս, երբ մարդիկ կը փորձեն հեռաձայնի թիւ, անձերու անունները, թուական կամ դէպք մը յիշել:

ՕԳՏԱԿԱՐ ԵՆ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ

Նախքան սմարթֆոններու, համացանցի, շարժական համակարգիչներու եւ նման արհեստագիտական կազմածներու գոյութիւնը, մարդիկ ունէին յստակ աշխատանքային ժամեր, որոնցմէ դուրս կարելի էր դիւրութեամբ կապ պահել աշխատակիցներու հետ՝ աշխատանքային հարցեր քննարկելու եւ լուծելու համար: Աւելին՝ ժամանակին աշխատանքը կը կատարուէր ձեռքերով, գրաւոր նամակներով, ժողովներով: Ներկայիս, էլ-նամակները, սքայփը եւ նման ծրագրերը կը գրաւեն գրաւոր նամակներու եւ երկար ժողովներու դիրքը: Սակայն, անոնք նաեւ առիթ կ'ընծայեն, որ մարդիկ միշտ կապուած ըլլան իրենց աշխատանքին եւ աշխատակիցներուն հետ: Արհեստագիտութիւնը կ'օգնէ, որ տարբեր երկիրներու մէջ գնտուող աշխատակիցներ կարենան դիւրութեամբ համագործակցիլ եւ հարցազոյցի իրարու հետ: Անդադար էլ-նամակները, հեռաձայնային նամակները եւ համակարգիչը օգտագործելով, մարդիկ կը շարունակեն իրենց աշխատանքը՝ աշխատանքային ժամերէն դուրս: Արդեօք որքա՞ն օգտակար է այս երեւոյթը: Որո՞նք

են այս երեւոյթի առաւելութիւնները եւ ժխտական հետեւանքները: Այս ծիրին մէջ, Բրիտանիոյ մէջ կատարուած հետազոտութիւն մը պարզած է թէ աշխատանքային ժամերէ դուրս աշխատիլը կրնայ վտանգի տակ դնել անհատին անձնական կեանքը: Աշխատանքի արդի դրութիւնը կրնայ պատճառ դառնալ յարաբերութիւններու քայքայման եւ բարձրացնել ամուսնալուծման հաւանականութիւնները: Այս հետազոտութեան մասնակիցներուն թիւը կը հասնի 50 հազարի: Հետազոտութիւնը նաեւ ցոյց կու տայ թէ արհեստագիտութեան զարգացումը պատճառ դարձած է, որ աշխատանքային ծիրին մէջ մարդիկ շաբաթը 7 օր եւ օրական 24 ժամ հասանելի ըլլան: Հակառակ, որ արհեստագիտութիւնը կը բարելաւէ աշխատանքի մակարդակն ու արդիւնաւէտութիւնը, սակայն անոր չափազանց օգտագործումը կրնայ ժխտական հետեւանքներ ունենալ անձնական կեանքին վրայ: Իսկ անձնական կեանքի հարցերը առնչուած են հոգեբանական հարցերու հետ: **ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ**

ԻՆՉ Է ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿՊՊՈՒԱԾ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆԸ

Հոգեբանական խանգարումներու կամ անհանգստութիւններու ծիրին մէջ գոյութիւն ունին բնաւորութեան հետ կապուած տասը անհանգստութիւններ: Բնաւորութեան խանգարումով ախտաճանաչուելու համար անհատին ներքին փորձառութիւնները, ինչպէս՝ զգացումներն ու մտածումները, ինչպէս նաեւ վարուելակերպը պէտք է նշմարելիօրէն տարբեր ըլլան անհատի միջավայրին եւ մշակոյթին ակնկալութիւններէն: Անոր զգացումներու, ընկալումներու եւ վարուելակերպի ընթացքը պէտք է ըլլայ համատարբ եւ անփոփոխ՝ զանազան կացութիւններու պարագային: Ընդհանրապէս անհատին այս ընթացքը ծայր կ'առնէ պատանկութեան կամ երիտասարդութեան տարիներուն եւ կը շարունակուի մինչեւ վերջ պատճառելով չափազանց ճնշուածութիւն:

Առաջին խումբը կը պարունակէ տարօրինակ եւ այլակերպ (eccentric) անհանգստութիւնները, երկրորդ խումբին մէջ դասուած են չափազանց զգացական եւ զգացական հիմնական խանգարումներով յատկանշուող անհանգստութիւնները, իսկ երրորդը կը պարունակէ վախի եւ անձկութեան զգացումներու հիման վրայ զարգացած բնաւորութեան խանգարումները: Աշխարհի բնակչութեան մօտ առաջին խումբի անհանգստութիւններէն տառապելու հաւանականութիւնը 5.7 առ հարիւր է, երկրորդ խումբի պարագային այս համեմատութիւնը կը նուազի 1.5 առ հարիւրի, իսկ երրորդ խումբի պարագային հաւանականութիւնը՝ 6 առ հարիւր է: 2001-2002 թուականներու տուեալներու հիման վրայ, Միացեալ Նահանգներու բնակչութեան 15 առ հարիւր համեմատութիւնը կը տառապի առնուազն մէկ բնաւորութեան անհանգստութեան:

Բնաւորութեան հետ կապուած հոգեբանական խանգարումները բաժնուած են երեք խումբերու (Cluster A, Cluster B, Cluster C):

ԿՈՂԱԿԻՑԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՏԻԶԻԲԱԿԱՆ ՅԱԻ ՊԱՐԱԳԱՅԻՆ

Բժիշկներ ընդհանրապէս կը քաջալերեն կողակիցի ներկայութիւնը բժշկութեան ժամանակ, որպէսզի բժշկուող անձը հոգեբանականօրէն աւելի հանգիստ ըլլայ: Այս ծիրին մէջ կատարուած են բազմաթիւ հետազոտութիւններ, որոնք հասած են այն եզրակացութեան թէ կողակիցի ներկայութիւնը շատ կարեւոր է յատկապէս լուրջ անհանգստութիւններու բուժում ստացող անձերու պարագային: Միացեալ Թագաւորութեան մէջ վերջերս կատարուած է հետաքրքրական հետազոտութիւն մը՝ կողակիցի ներկայութեան եւ ցաւի ըմբռնումի միջեւ կապին վերաբերեալ: Հետազոտութեան հեղինակ՝ Տոքթ. Շարլոթ Գրահէ կ'ըսէ թէ ուսումնասիրութեան հիմնական նպատակն է յայտնաբերել թէ արդեօք կողակիցի ներկայութիւնը կը նուազեցնէ ցաւի զգացումը հիւանդին մօտ: Social Cognitive

and Affective Neuroscience ամսագրին համաձայն՝ այս ուսումնասիրութեան մաս կազմած են 39 կիներ: Ուսումնասիրութեան աւարտին ի յայտ կու գայ թէ սիրոյ հորմոն՝ օքսիթոսինի բարձր քանակը կրնայ սաստկացնել ֆիզիքական ցաւերը: Այս հորմոնը բարձր քանակով կ'արտաճուի կողակիցի ներկայութեան ժամանակ: Ուսումնասիրութեան արդիւնքները պարզեցին թէ կողակիցին ներկայութիւնը կրնայ սաստկացնել ֆիզիքական ցաւերը, յատկապէս այն կիներու պարագային, որոնք կը նախընտրեն առանձին դիմազրաւել դժուարութիւնները: Այս երեւոյթի բացատրութիւններէն մէկը այն է, որ կողակիցի ներկայութիւնը կրնայ անհատը շեղել ցաւազրկման կամ ցաւը մեղմացնելու անհատին որդեգրած միջոցներէն:

ԷՓԻԼԷՓՍԻՆ ԿՐՆԱՅ ԱՌՆՉՈՒԱԾ ԸԼԼԱԼ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՀԵՏ

Epilepsia ամսագիրը անդրադարձած է վերջերս կատարուած հետաքրքրական ուսումնասիրութեան մը, որուն համաձայն՝ Epilepsy-ով (լուսնոտութիւն) ախտաճանաչուած չափահասներու 20 առ հարիւրին մօտ յայտնաբերուած են Attention Deficit Hyperactivity Disorder-ի ախտանշաններ: Ըստ հետազոտութեան հեղինակներուն՝ Epilepsy-ի եւ ADHD-ի միջեւ նման կապ մը նախապէս չէ յայտնաբերուած: Epilepsy-է տառապող անձերու մօտ ADHD-ի ախտանշանները կրնան թերացնել անոնց աւօրեայ կեանքը եւ ընդհանուր առմամբ նուազեցնել կեանքի մակարդակը: Ուսումնասիրութեան մասնակիցներու մօտ, Epilepsy-ի կողքին ADHD-ի ախտանշաններու գոյութիւնը առնչուած էր ընկճուածութեան,

տրամադրութեան անկայունութեան եւ աշխատանքային կեանքին մէջ արդիւնաւէտութեան մակարդակի նուազումին: Այս ուսումնասիրութեան մաս կազմած են 1,361 անձեր, որոնք ախտաճանաչուած են Epilepsy անհանգստութեամբ: Epilepsy-ն ուղեղային անհանգստութիւն մըն է, որուն հիմնական ախտանշաններն են՝ անակնկալ seizure-ները, որուն ժամանակ տեղի կ'ունենան թեւերու եւ ոտքերու կրկնողական շարժումներ: Այս շարժումները կը դանդաղին նախքան seizure-ի աւարտը: Այս ընթացքին, անհատին աչքերը կը մնան բաց եւ անթարթ, անհատը կրնայ դադրիլ շունչ առնել եւ քանի մը վայրկեան կապուտ դառնալ: Seizure-ներէն ետք ուշքը վերականգնելու գործընթացքը կրնայ երկարիլ ժամերու վրայ:

ՆԱՐՍԻՍԻՍՏԱԿԱՆ ԲՆԱԴՈՐՈՒԹԵԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄԻ ԱՆՏԱՆՇԱՆՆԵՐԸ

Նարսիսիզմի հիմնական յատկանիշներն են՝ ինքնա-սիրութիւնը եւ ինքզինք ուրիշներէն բարձր դասելու սովորութիւնը:

Նարսիստական անձեր միշտ պէտք ունին գնահատանքի եւ բնաւ չեն բաւարարուիր իրենց ուղղուած հիացումներով եւ գնահատանքներով: Այս անձերուն մօտ սովորականէն նուազ կ'ըլլայ համակրական հասկացողութիւնը (empathy) եւ նարսիսիզմի ախտանշանները ի յայտ կու գան երիտասարդութեան ընթացքին:

Narcissistic Personality Disorder-ով ախտաճանաչուելու համար, անհատին մօտ պէտք է առկայ ըլլան հետեւեալ 9 ախտանշաններէն առնուազն 5-ը եւ բոլոր ախտանշանները պէտք է սկսած ըլլան պատանկութեան ժամանակ կամ 18-էն 23 տարեկանի միջեւ:

Անհատը կը նկարագրուի որպէս ինքնահաւան եւ ունի չափազանցուած ինքնակարեւորութեան զգացում եւ կը չափազանցէ իր ձիրքերը, տաղանդները եւ իրագործումները:

Անիրապաշտ երեւակայութիւններ ունի անասման յաջողութիւններ ձեռք բերելու, ուժի, գեղեցկութեան, խելացութեան եւ իտէալական սիրոյ վերաբերեալ:

Համոզուած է թէ ինք իւրապատու եւ կարեւոր է եւ զինք կը հասկնան միայն անոնք, որոնք յատուկ են եւ կը գտնուին ուժի կամ աշխատանքային բարձր դիրքերու վրայ: Ան նաեւ համոզուած է, թէ ինք միայն նման մարդոց հետ կրնայ յարաբերիլ:

Կը պահանջէ անսահման գնահատանք եւ հիացում: Համոզուած է, որ ինք միշտ ճիշդ է եւ իրաւունք ունի գործելու ըստ իր փափաքներուն:

Իր յարաբերութիւններուն մէջ կը շահագործէ կացութիւններ եւ անձեր, որպէսզի հասնի իր նպատակներուն:

Համակրական հասկացողութեան թերութիւն ունի եւ կարողութիւն կամ փափաքը չունի ընկալելու այլ անձերու զգացումները կամ կարիքները:

Յաճախ կը նախանձի կամ կ'ենթադրէ թէ ուրիշներ իրեն կը նախանձին:

Անբարտաւան, հպարտ եւ գոռոզ է: Թէեւ Narcissistic Personality Disorder-է տառապող անձերը կը թուին չափազանց ինքնավստահ ըլլալ եւ բարձր ինքնարժեք ունենալ:

ունենալ, անոնց ինքնարժեքը յաճախ անկայուն է: Յաճախ ինքնավստահութիւնը եւ անբաւարար ինքնարժեքը առնչուած են նարսիսիզմի հետ: Իրենց ինքնավստահութեան եւ ինքնարժեքը ունենալու թեան պատճառով, Narcissistic Personality Disorder-է տառապող մարդիկ անհանդուրժողական վարուելակերպ կը ցուցաբերեն քննադատութիւններու, ցաւի եւ պարտութեան նկատմամբ: Անոնք յաճախ կը խուսափին արտայայտել իրենց ներքին ժխտական զգացումները, ինչպէս՝ ցաւը, նուաստացումի զգացումը, ընկճուածութիւնը եւ անձկութիւնը:

Այս անձերը նաեւ հակամէտ են վրիժառութեան եւ այլ ախտանշաններու կողքին այս յատկութիւնը եւս կրնայ պատճառ դառնալ, որ անոնք մեկուսացուին իրենց շրջապատին կողմէ:

Կարգ մը պարագաներու անոնք անձամբ կ'որոշեն հեռու մնալ իրենց շրջապատէն՝ ծածկելու համար իրենց պարտութեան եւ նուաստացումի զգացումները: Անոնց անձնական յարաբերութիւնները յաճախ կարճ եւ անկայուն կ'ըլլան, որովհետեւ

Narcissistic Personality Disorder-ով ախտաճանաչուած անձերը հակամէտ են չարաշահելու իրենց մտերմները: Աշխատանքային եւ ուսման ծիրին մէջ այս անձերը կրնան դիմագրաւել թերութիւններ, որովհետեւ անոնք յաճախ կը խուսափին այն կացութիւններէ, ուր պարտութիւնը կրնայ հաւանական ըլլալ: Narcissistic Personality Disorder-է տառապող մարդիկ հեռու կը մնան մրցակցական միջավայրէ:

Narcissistic Personality Disorder-ով ախտաճանաչուած անհատներու պարագային բարձր են ընկճուածութիւնը (major depressive կամ disorder dysthymia), ուտելու հետ կապուած անհանգստութիւններէ (յատկապէս anorexia nervosa-է) եւ մոլութեան հետ կապուած անհանգստութիւններէ տառապելու հաւանականութիւնը: Այս անհանգստութիւնը մաս կը կազմէ բնաւարութեան հետ կապուած երկրորդ խումբի անհանգստութիւններու շարքին: Կարեւոր է նշել, որ նարսիսիզմի հետ կապուած ախտանշանները կրնան սովորական երեւոյթ ըլլալ պատանիներու մօտ, մանաւանդ երբ անոնք սկսին նուազիլ չափահասութիւնէն ետք: Narcissistic Personality Disorder-ով ախտաճանաչուած անձերու մեծամասնութիւնը տղամարդիկ են:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ

Շաբունակուած էջ 7-էն

- ստեղծեց Հայկական Սփիւռքի հոգեւոր եւ աշխարհիկ կառույցների հզոր եւ արդիւնաւէտ ցանց, ինչը նպաստեց աշխարհասփիւռ հայ համայնքներում հայապահպանութեան, հայի՝ յարգանք եւ համակրանք վայելող կերպարի կերտմանը, հայ ժողովրդի արդար իրաւունքների պաշտպանութեանը,

- համագաղափար գործակցութեան եւ հայրենադարձութեան ընդարձակ ծրագրով համախմբեց եւ վերստեղծեց ցեղասպանութեան հետեւանքով վերացման վտանգի առջեւ յայտնուած ազգային զենոֆոնները,

- Առաջին եւ երկրորդ աշխարհամարտերում բերեց իր արժանի ներդրումը միջազգային անվտանգութեան եւ խաղաղութեան հաստատման գործում, փառաւոր յղթանակներ տարաւ Սարդարապատի եւ Արցախեան հերոսամարտերում:

11. Դիտարկում է Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը որպէս կարեւոր հանգրուան պատմական արդարութեան համար մղող պայքարը «Յիշում եմ եւ պահանջում» կարգախօսով շարունակելու գործընթացում:

12. Կոչ է անում հայորդիների գալիք սերունդներին՝ հայրենասէր, գիտակից եւ ուսեալ կեցուածքով պաշտպան կանգնել հայրենի սրբազան ժառանգութեանը, աննահանջ պայքարով ծառայել յանուն՝

- առաւել հզոր Հայրենիքի՝ ազատ եւ ժողովրդավար Հայաստանի Հանրապետութեան,
- անկախ Արցախի առաջընթացի ու զօրացման,
- աշխարհասփիւռ հայութեան գործուն համախմբման,
- համայն հայութեան դարաւոր նուիրական նպատակների իրականացման:

29 Յունուարի 2015 թ., ք. Երեւան

ՀԱՅՐ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Շաբունակուած էջ 8-էն

ոչինչ: Գնացողների մեծագոյն մասը մեծ յաջողութիւնների չի հասնում: Պահպանում է իր գոյութիւնը: «Գնում ենք մեր գաւակների համար», ահա ստանդարտ արդարացումներից մէկը: Այսինքն, այստեղ գաւակները ոչնչի հասնելու շանս չունեն, իսկ այնտեղ...

Բայց երբ գնում ես, կտրուում ես հայութիւնից: Գոնէ հիմնականում: Արդէն յաջորդ սերունդը սովորաբար այնքան է հայ, ինչքանով որ «հայկական արմատներ» ունի: Լաւագոյն դէպքում՝ իրենց երկրների հայրենասէր քաղաքացիներ, գիտնականներ, շախմատիստներ, երաժիշտներ եւ այլն: Ահաւասիկ անուններ Ուկրաինայի վերջին դէպքերի կարեւորագոյն «գործող անձանց» ցուցակից՝

Սերգէյ Լաւրով, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար, Արսեն Աւակով, Ուկրաինայի

ներքին գործերի նախարար, Միխայիլ Զուրաբով, Ռուսաստանի դեսպան Ուկրաինայում:

Այսպիսով, այս միջազգային, թէ ազգամիջեան ընդհարման, թէ պատերազմի գլխաւոր գործող անձերից երեքը հայ են, կամ «հայկական արմատներով» կիսահայ (եւ դեռ էլի կան, օրինակ՝ Լուզանսկի ինքնահռչակ հանրապետութեան առողջապահութեան նախարար Լարիսա Հայրապետեանը): Եւ գործում են իրար դէմ, ըստ իրենց երկրների շահերի: Լաւրովը Հայաստանի եւ մեր տարածաշրջանի վրայ վճռական ազդեցութիւն ունեցող հզորագոյն մի երկրի ամենաբարձր իշխանութիւն ունեցող գործիչներից է, այն քչերից, որ չի էլ թաքցնում իր հայկական արմատները: Եւ ի՞նչ օգուտ Հայաստանին կամ հայութեանը դրանից: Ոչ մի, բարեկամներ: Կամ՝ համարեա՞ր ոչ մի:

«ԱՌԱՒՕՏ»

ՆԱԽ ՓՆՏՈՒ ՆԵՐՔԻՆ ԱՍՐՈՒԹԻՒՆԴ

Շաբունակուած էջ 8-էն

Համաձայնագիրներ, դաշնագիրներ եւ այլն փոխ յարաբերութիւններում մէջ անխուսափելի են, մանաւանդ այս դարուս երբ աշխարհ ափի մը մէջ կը պարփակուի: Փախուստ չկայ անխուսափելիէն, սակայն, որպէսզի առաւելագոյն շահով կամ երբեմն ալ նուազագոյն վնասով կարենանք բարոյք լուծումի յանգիլ, պէտք է ամրանալ, որպէսզի կարենանք մեր իրաւունքները ձեռք բերել, այս կը գործնականացուի եթէ...

Եթէ պատմութենէն դաս առնենք:

Ո՞վ է առեր պատմութենէն դաս:

Ճորճ Պուշ (երէց) իր ատենին յոխորտաց ըսելով.՝ թէ «Նաչակրաց արշաւանք պիտի կատարենք»: Ատենին այս ձեռքը գրեց ու շաբաթաթերթ մըն ալ տպեց, թէ՛

դէմդ կ'ելլէ Սալահ Ըլ Տինը...

«Այն ինչ որ փորձառութիւնն ու պատմութիւնը կը սորվեցնեն, հետեւեալն է. թէ՛ ժողովուրդն ու պետութիւնները պատմութենէն երբեք չեն սորված ոչ մէկ բան եւ ոչ մէկ բան յառաջ բերած են անկէ»:

Հարցերու մէջ առաջնահերթութիւններ կ'ըլլան, մեր պարագային մեր առաջնահերթութիւնը պիտի ըլլայ.՝ «ՆԱԽ ԻՐԱԳՈՐԾԷ ՆԵՐՔԻՆ ԱՍՐՈՒԹԻՒՆԻՆ» ու արտաքին թշնամին ինք իր հետ հաշիւի պիտի նստի երբ հետդ գործ ունենալ ուզէ:

Պէտք է վստահիլ թուրք պետութեան:

Պէտք է վստահիլ ոչ մէկ պետութեան:

Պէտք է վստահիլ շահերու գուզակցութեան:

ՄԻԱՅՆ: Պատմութենէն քաղած դասս:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻՒ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

www.massisweekly.com
Updated every Friday

ՈԱՖՖԻ ԲԱԳԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՆԱՐՑԱԳԱՆՔ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆ

Միրելի անդուգական Ռաֆֆի, եթէ նախախնամութեան առեղծուածային ճիւղտը կախարդական տնօրինութեամբ ձեռքիդ մէջ տեղաւորուէր, քաջ վստահ ենք որ պիտի չուզէիր ու ինչպէ՛ր մեզ բոլորս այս գեհնէն, որտեղ կը տուայտինք անմխիթար:



Մարդկային ազնիւ սիրանքներու խտացումով:

Անհաւատալի բայց իրաւ, որքան յուսադրուած կը հետեւէինք ամէն հանգրուաններուն, օրհնելով ամէն օր, մեր սիրելի արար բժիշկներուն, որոնք Սուրիոյ այս դժնդակ պայմաններուն մէջ, յաջողութեամբ աւարտեցին այն մեծ սիրանքը զորս կը կրէին իրենց ուսերուն, միշտ յուսադրուած ու բաւարարուած իրենց առաքելութեան արդիւնքէն:

Առեղծուած մը անարդարանալի ու անբացատրելի:

Ինչպէս ընդունիլ եւ հաշտուիլ, երբ մի քանի օրեր առաջ, հեռաձայնային հաղորդակցութեամբ, ուրախ տրամադրութեամբ փոխանցեցիր որ բոլոր պահանջուած թուղթերը թարգմանուած յանձնեցիր պետական կեդրոն, եւ ուրախութեամբ գրուեցեցին որ պիտի միանանք նոյն երդիքի տակ, թէ կողմ եւ ժամանակաւոր Գանատայի մէջ:

Աննկարագրելի է մեր խոր վիշտը, քու ընտանիքէդ ապրող միակ մոհիկանը՝ որ խտացումն էր մարդկային բոլոր առաքիլի սիրանքներուն, միշտ պատրաստ ժպիտ բաշխելով եւ կատակախօսութեամբ, նեցուկ կանգնելով կարօտեալին հարագատ թէ ծանօթ, ընկեր եւ բարեկամ, սիրուած անձնատուներուն, որուն կարկառուն փաստը թափօրիդ հետեւող այն հոծ բազմութիւնն է զորս եկեղեցին անկարող եղաւ պարփակելու:

Ուրախացանք որ քու հարազատ կուսակցութեան պարզեւտրումին արժանացար ողջութեանդ օրով, փաթեթեցին պատեանդ Ս.Գ.Զ.Կ-ի դրօշով, արժանի գաւակ, իսկական առաքիլի կերպար,

Մխիթարուած ենք, որ երջանիկ էիր ընտանիքովդ, ունեցար հասկող ազնիւ նուիրուած կողակից, շատ սիրասուն բալիկ, որը քու հպարտութեան ու գոհունակութեան մեծագոյն հաճոյքն էր իր ողջ կերպարով, եւ որը իր փափկասուն խառնուածքով, դարձաւ անմիջական օգնականը քու վերջին ծանր օրերուդ գերմարդկային ճիգերով, յաղթահարելով բոլոր դժուարութիւնները զորս կը բառնային ազգայն ուսերուն:

Անժամանակ գացիր, արժանի էիր վայելելու կեանքիդ բարիքները որոնք դուն կերտած էիր, քու խելացի, հեռատես, ողջմիտ մտածելակերպով ու ձեռներէց կարողութեամբ:

Ականջիս մէջ է ամէնօրեայ հեռաձայնին հաղորդակցութիւնդ «Ինչպէս ես, բանի մը պէտք ունիս»: Քու ներկայութեանդ պէտք ունիմ սիրելի Ռաֆֆի անսփոփ ու անմխիթար:

Արդեօք կայ հոգիի անմահութիւն, եթէ այո, յուսադրուած շարունակենք այս անողք կեանքը, օր մը միանալու երազանքով:

Հարագատ սգակիր ԱԶՆԻԻ ՔԻՐԻՇԵԱՆ

«ՄԵՐ ԼՈՅՍ, ՄԵՐ ՅՈՅՍ»

Շարունակուած էջ 13-էն

արուեստագիտուհիները, երգիչ-երգչուհիները, լաւագոյնս արժեցուցին իրենց կատարողական շնորհքները, մեծապէս սատար հանդիսանալով ձեռնարկի ամբողջական յաջողութեան: Պիտի արժէր իւրաքանչիւրին մասին անդրադառնալ, մեր հիացմունքը արտայայտելու համար իրենց կատարողական արուեստին մասին, սկսելով՝ խմբավար Պարսուճեանին մինչեւ նորայայտ պատանի ամուսնեղ Միքայէլ Փէսնիլեանը:

Ուշագրաւ էին Գանիլ Զէյնին, թենոր՝ «Աղօթք Տէրունական»: Փառիկ Նազարեանը՝ «Բարի Լոյս»: Արա Գուրույեանը, պաս, «Հայրենիքիս հետ»: Անահիտ Ներսէսեանը, սոբրանո, «Հայրենիքիս հետ» (Ալ. Յարութիւնեան): Անահիտ Հալիպին՝ «Հաւիկ», «Ահեղ Զայն» (Տաղ Գ. Նարեկացի): Միրուած ամուսնեղ թագուհի Արզումանեան՝ «Իմ Անունն ու Հայրանունը»: Հայերը Սարեանը՝ «Հաւար», (Ակնայ Անտունի): Անի Մուրատեան մենապար՝ «Էլէքիա»: Մենապար՝ Միքայէլ Փէսնիլեանը՝ «Մենք», (Գէորգ Էմին): Փ. Նազարեանը՝ «Գիշեր ցերեկ, Հեշ չես ելլեր մտացս (Կոմիտաս): Հայերը Սարեան-Գառնի Հատիտեանը՝ «Երկիր Հայրենի», (Ամիր-

խանեան): Ալիք Պարսուճեանը՝ «Հայաստան», Ռուբէն Յարութիւնեան՝ դուդուկ: Փ. Նազարեանը՝ «Ել, Եկո՛ւ» (Ակնայ Անտունի): Բարձրօրէն գնահատելի էին երգչախումբն ու նուագախումբը, որոնք զմայլեցին ներկայ արուեստասէր հասարակութիւնը: Արտակարգ խանդավառութիւն ստեղծեց Տաւրի պարային խումբը:

Հայոց Յեղասպանութեան նուիրուած «Մեր Լոյս, մեր Յոյս» վերտառութեամբ ձեռնարկը մանրամասնօրէն ուսումնասիրուած յայտագրով, գեղարուստականօրէն յագեցած բնոյթով եւ նաեւ, ազգագրական ու հայրենասիրական հարուստ բովանդակութեամբ՝ ուշադրութեան արժանի արուեստի մատուցում մըն էր գաղութէս ներս, կոչուած՝ երկար ժամանակ մնալու, մէն մի հանդիսատեսի յիշողութեան մէջ: Արդարեւ՝ յաջող ձեռնարկ մը, որուն համար ջերմօրէն կը շնորհակտընք եւ կը գնահատենք նախաձեռնող Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութեան Հայոց Յեղասպանութեան Հարիւրամեակի Յանձնախումբը, գեղարուեստական յայտագրով՝ «Լարք Երաժշտական Ընկերակցութիւնը» ու անոր Տնօրէն՝ բազմատաղանդ խմբավար՝ Վաչէ Պարսուճեանը: Վարձքերնիդ կատար:

ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆԻ «ԼՈՒՍԱՐՁԱԿԻՆ ՏԱԿ»

Շարունակուած էջ 16-էն

ինքնասիրութեան, ձայն բարձրացնել, հռչակելու համար արդարութիւնն ու ճշմարտութիւնը, եւ պախարակելու սխալ դիրքորոշումներն ու որոշումները՝ նոյնիսկ, երբ անոնք գործադրուած ըլլան իր սիրած ու յարգած ազգային գերազաս մարմիններու կողմէ:

Մնայուն կայք մըն է ուրեմն այս երկհատորեակը, ուր ապագայ պատմագիրներն ու պրպտողները պիտի գան փնտռելու մեր բարդ դարաշրջանի կարեւոր դէպքերուն, դէմքերուն եւ բարեխառնութիւններուն առարկայական բնութագրին ու ճշմարտութիւնները: Անվերապահօրէն կրնանք հաստատել որ այս բոլոր մարգերէն ներս դուն ցուցաբերած ես հմտութիւն, հաւասարակշռուած դատում, եւ պայծառատեսութիւն, միշտ պահելով պարզօրէն յստակ եւ գեղեցիկ ոճը ու աշխատածեղ՝ քու իջնուրոյնութենէդ բխող: Դուն մնացիր առարկայական եւ տեսլապաշտ միանգամայն, մտքիդ եւ գիտելիքներուդ լոյսով պարզաբանելով եւ մեկնաբանելով

մեր ազգային, ընկերային եւ մշակութային այժմէական ու բարդ հարցադրումները, թելադրելով նաեւ հեռանկարային լուծումներ:

Այս բոլորով, չենք կրնար մոռնալ նաեւ կարեւոր ներդրումը մեր նոր սերունդներու դաստիարակութեան վսեմական առաքելութեան մէջ, անոնց մատող հոգիներուն ջամբելով հայ գրականութեան եւ լեզուին սէրը:

Փոքր սիրանք մը չէ նաեւ, քառորդ դար, գործակիցներուդ անմիջական մասնակցութեամբ, թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անձեյըսի մասնաճիւղին այնքան բեղմնաւոր գործունէութեան ճարտարապետութիւնը ատանձ-նելով, Գիրի, Արուեստի եւ Մշակոյթի Չահր միշտ վառ պահելով:

Այս բոլոր իրագործումներդ անշուշտ վայելեցին առօրեայ, անվերապահ նեցուկը սիրելի կողակիցիդ՝ Տիկին Սօսիին, որ դարձաւ քու նեշնչման եւ քաջալերանքի մնայուն աղբիւրը:

Վարձքը լիակատար, Միրելի Վաչէ եւ գիրչդ թող մնայ միշտ դալար ու հատու: Արեւաշատ տարիներ քեզի:

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ
ՅԱԿՈՒՔ ՓԱԹԱՓՈՒԹԵԱՆ-Ի մահուան տխուր առիթով (մահացած Լիոն-Ֆրանսա) «Մասիս» խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն: Մասնաւորաբար եղբոր ծանօթ գրող եւ թերթիս ներհուն աշխատակիցներէն՝ Տէր եւ Տիկ. Սարգիս Վահագնի (Փաթափութեան):

ՅԱՒԱԿՑԱԿԱՆ
ՅԱԿՈՒՔ ՓԱԹԱՓՈՒԹԵԱՆ-Ի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանիքի անդամներուն, մասնաւորաբար եղբոր ծանօթ գրող՝ Տէր եւ Տիկ. Արագիս Վահագնի (Փաթափութեան):

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՁ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Շարունակուած էջ 15-էն
Երրորդ նիստը ամբողջութեամբ նուիրուած էր «Հայ-թրքական յարաբերութիւնները»-ուն: Այս ծիրին մէջ գեկուցումներ ներկայացուցին դոկտ. Արսէն Աւագեան, նիւթ ունենալով՝ «Թուրքիա-Հայաստանի Հանրապետութիւն յարաբերութիւնները 1991-2014» եւ լրագրող թաթուլ Յակոբեան՝ նիւթ ունենալով՝ «Հայ-թուրք ոչ պետական յարաբերութիւնները»: Գիտաժողովի չորրորդ եւ վերջին նիստին ընդհանուր խորագիրն էր

«Թուրքիոյ Հանրապետութիւնն ու թուրքը՝ յաչս երկրին փոքրամասնութիւններուն»: Զեկուցումներ ներկայացուցին Պոլիսէն դոկտ. Պիւլէնթ Պիլմեզ՝ «Թուրքիոյ Հանրապետութեան կեցուածքը՝ իր փոքրամասնութիւններուն նկատմամբ (1923-2014)» նիւթով եւ ազգագրագէտ դոկտ. Հրանոյշ Խառատեան՝ «Հայերուն կարգավիճակը ժամանակակից Թուրքիոյ մէջ. իսլամաց(ու)ած հայերը» նիւթով:
Իւրաքանչիւր նիստէ ետք տեղի ունեցաւ քննարկում:

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՌԵՅԱՆ ՄԱՆՈՒԿԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԿԿԱՅՈՒԹԻՒՆԸ 1910 Թ., ՏԱՐՕՆ, ՈՒՐԱՑՆ ԳԻՒՂ

Ես ծնունդիս եմ Տարօնում: Մերոսով Մաշտոցն էլ Տարօնից էր: Մեր գիւղում եկեղեցի կար եւ վանք կար՝ Ս. Աստուածածին անունով: Ծառերը ուխտի էին գալիս Տարօն: Խուժը մեր Տարօնին շատ մօտ էր: Հօրս մէջը խուժեցի էր: 1915 թ. Ապրիլի 24-ին դեռ արեւը չծագած վեր էինք կացել, հայրս հանդ պիտի գնար, մայրս էլ հաց պիտի թխէր: Ես ունէի մի փոքր եղբայր: Մէկ էլ տեսանք, որ թուրք ասկերները եկան՝ հրացանները ունենրին զգած, եկան, խուժեցին մեր տունը, ասացին.

«Արդեն կուր է, մեր սուլթանը հրամայել է, որ հայերին պիտի քշենք»: Տասնհինգ-քսան ըոպէ չանցած՝ մեզ տնից դուրս հանեցին: Մեր չորս կողմերը ասկերներ էին, որոնք բղաւում էին. «Շուտ արէք, շուտ արէք»: Էսպէս մեզ գիւղից դուրս հանեցին: Տեսանք՝ մեր մօտիկ խուժը գիւղի հայերին էլ են տեղահանել: Վանքի էս կողմից մենք էինք բարձրանում, վանքի միւս կողմից էլ խմբեցիք էին բարձրանում: Մեզ բերին հասցրին խուժ: Արդէն ասի՝ իմ հօր մայրը խուժեցի էր, էստեղ էր ապրում: Խուժի մէջ ապրողների կէսը հայ էր, կէսը՝ եզդի: Առաջ մեզ էին տեղահանել, յետոյ խուժի հայերին էլ տեղահանեցին: Խառնուանք իրար: Ասկերները մեզ քշեցին ոչխարների հօտի պէս: Մեզից յետոյ սկսել էին մեր տները թալանել: Էսպէս քայլելով, սոված, ծարաւ, չոզնած, ուժասպառ հասանք վան՝ Արտամետ: Էստեղ մի քիչ հանգստացանք: Էստեղ իմ տատն ու արպերս մեռան: Հէրս տարաւ իր ձեռքովը թաղեց: Վանից դուրս եկանք: Գիշերով էինք գնում, որ ապահով լինենք:

Արդէն մուժ էր: Մենք քայլում էինք, հասանք թուրք բերի բիններին, դրանց շները սկսեցին հաչալ: Թուրքերը եկան մեզ պաշարեցին, տղամարդկանց սկսեցին խուզարկել, գէնքերը հաւաքեցին, նրանց մի կողմ տարան՝ սպանեցին: Կանանց ու երեխաներին բերին իրենց մօտ, վրանների տակ: Բայց նրանք լսել էին, որ ռուսական զօրքը գալիս է, եկան մերոնց ասին.

- Ով կ'ուզի՝ տանենք ձեզ տանք ռսին:

Իմ մայրը ասաց.

- Դուք թուրք էք, դուք իմ գաւակին սպանեցիք, ես ձեզ մօտ չեմ մնալ, կ'երթամ ռսի մօտ:

Էդ թուրքերը մեզ զցեցին իրենց առաջները, բերին մի ձորի բերան, սկսեցին կրակել: Երբ մամայիս կրակեցին, ես լաց լինելով վրան ընկայ, քիթս վիրաւորուեց, ձեռքս կտորուեց՝ կախուեց, ուշքս գնաց: Թուրքերը կարծեցին՝ ես էլ եմ մեռած, թողին ու գնացին: Ես մնացի դիակների վրայ: Շուրջս լուռ էր: Ես ցաւերի մէջ էի, քիթս տնքում էր, ձեռքս եւս: Աստղերը ելան: Յետոյ առաւօտ եղաւ: Արեւը էլաւ, էլ չգիտեմ ինչքան ժամանակ անցաւ: Մէկ էլ իմ հօրեղբոր կնոջ արպերը, որը ինը-տասը տարեկան մի տղայ էր, եկել, տեսել է, որ ես կենդանի եմ, մօրս դիակի վրայ եմ ելնում, նստում, քանի որ փոքր էի, չէի հասկանում, որ մայրս արդէն մեռած է: Էդ տղան ինձ առնում է, սկսում ենք քայլել:

Մեր շրջապատը ողջ մարդ չկար, միայն դիակներ էին, թուրքերը սպանել, թողել, գնացել էին: Մենք, երկու երեխայ, ձեռք-

ձեռքի բռնած գնում էինք, իրիկունը որ վրայ էր գալիս, իրար գրկած քնում էինք: Ես վիրաւոր եմ՝ քիթս ճեղքուած, արիւնը լերդացել, քարացել է, ձեռքիս ոսկորը կտորուած կախուել է, բայց մենք քայլում ենք սոված, ծարաւ, գոնէ մարդկային շունչ ենք ուզում հանդիպել: Մէկ էլ տեսանք՝ մի վրան: Էս տղան եզդիերէն խօսաց, նրանք հասկացան, որ թուրքերը մեզ վնասել են, մեղքացան, տարան իրենց վրանը, մի փոքր ուլ մորթեցին: Ութսուններէք տարի է անցել, բայց դեռ չեմ կարող մոռանալ, էդ ուլի կաշին քերթեցին, քաշեցին ձեռքիս ու քթիս: Էդ երեխուն դրկեցին ջրի, ձեռքը տուին գիւղգիւղում, էն գնաց: Ես սկսայ լացել, որ տեսայ իմ նոր արպերացուն եկաւ, ես հանգստացայ: Եզդիները ասին.

«Մնացէք մեզ մօտ մի շաբաթ. էդ վէրքերը բուժենք, նոր՝ գնացէք», բայց մենք չմնացինք: Եզդիները մեզ հաց ու պանիրով բոխչա տուին, որ ճամբին ուտենք: Մենք եկանք հասանք ռուսների մօտ:

Էստեղ հօրեղբորս կինը տեսաւ մեզ, եկաւ տարաւ: Զինուորական գաթիլովը ձեռքս տուեց, ասեց. «Դու վիրաւոր ես, գնա՛, ռուսներից ճաշ ուզի՛»:

Գնացի, բերի, կերանք: Ռուսները ճամբայ ելան դէպի Ռուսաստան, մենք էլ դրանց հետ սկսանք քայլել: Իմ մի կողմը հօրեղբորս կինն էր, միւս կողմս՝ էդ տղան: Էն կողմից երկու կին ասեցին հօրեղբորս կնկան. «Էս վիրաւոր աղջիկը տանես, ի՞նչ անես, բանի պէտք չէ»: Նա լսեց դրանց խօսքը, ինձ տուեց ռուս գինուորներին: Իմ արպերացուն իմ մօտից լալով հեռացաւ: Ռուսները ինձ տարան բերեցնտով փակուած արաբաների մէջ՝ դրեցին, որտեղ շատ ռուս վիրաւոր գինուորներ կային: Դրանց հետ ես եկայ իգդիր: Իգդիրում լիքը գաղթականներ էին, բոլորը գետնին նստած էին:

Ռուս գինուորները եկան անունս, ազգանունս հարցրին, ես չգիտէի իմ անունը: Իմ լուրը տարածուել էր գաղթականների մէջ, որ Մանուկի աղջիկը վիրաւոր ողջ է մնացել: Մէկ էլ մի աղջիկ եկաւ, ինձ տեսաւ, ասաց. «Ես սրան գիտեմ, Մանուկի աղջիկն է»: Իմ անունը գրել տուեց՝ «Ռեհան

Մանուկի Մանուկեան»: Ես ընկայ մարդու ձեռք: Ինձ բերին Երեւան: Մեր ընտանիքը եղել է շատուոր՝ պապս, հօրեղբայրս, նրա կինը, հէրս, մէրս, փոքր արպերս: Էս բոլորը մեռան թուրքի ձեռքից, միայն ես եմ մնացել կենդանի, էն էլ նապաստակի քթի պէս ճեղքուած քթով ու կտորուած ձեռքով: Տե՛ս, մատս չկայ. կտորուած է, համ էլ ամաչում եմ, որ քեզ հետ խօսամ, բայց ինչ արած, էս էլ իմ ճակատագիրն է: Ինձ բերին, հասցրին Ղարաքիլիսայի որբանոցը:

Տարի ու կէս մնացի որբանոցում, էստեղ կօշիկ, շոր տուեցին: Յետոյ մեզ տեղափոխեցին Թիֆլիս, երբ ցարին գահընկեց արին: Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը դարձել էր մանկատուն: Բոլոր որբերին հաւաքել էին էստեղ: Միջանցքներն անգամ լիքն էին անտէր երեխաներով: 1918 թ. մեզ տարան Կարս: Ամերկոմը տէր կանգնեց որբերին, բերեց Կարս...

Վերծինէ Ավագլեան, Հայոց Ցեղասպանութիւն. Ականատես վերապրողների վկայութիւններ, Երկրորդ համալրուած հրատ., Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 2011, վկայութիւն 6, էջ 86-87:



Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակ

ԱՊՐԻԼ 24, 10^{ԻՆ}

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԲԱՅԼԱՐՇԱԿ

ՓՈՔՐԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԸՆ ԴԷՊԻ ԹՐՔԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ

Հարիւրամեակի Ձեռնարկներ

Ապրիլ 14 Էբումենիք Արարողութիւն Cathedral of Our Lady of the Angels Los Angeles, CA	Ապրիլ 23 Հանդիսատար Սուրբ Պատարաք Սուրբ Ղեոնդեանց Մայր Տաճար Burbank, CA	Ապրիլ 24 Արդարութեան Քայլարշա Փոքրիկ Հայաստանէց դէպի Թրքական Հիւպատոսարաք	Ապրիլ 25 Հսկում Մոնթեպելլոյի Ցեղասպանութեան Յուշարձան Bicknell Park, Montebello, CA	Ապրիլ 26 Յուշ Երեկոյ Կազմակերպութեամբ Կլէմէնտի Քաղաքապետութեան Alex Theatre, Glendale, CA
--	---	---	--	--

Յանելեալ տեղեկութիւններու համար այցելեցէ՛ք՝ www.march4justice.org